1 5/46

Ստեփաննոս Պօղոսեան
ՍԵՐԵԲՐԱԿԵԱՆՑ
Աստրախան

2004

ՓՈՔՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ

# ՄԵԾ ՍԻՐՏ

# ՄԱՐԳԻՔԸ

Ստեփաննոս Պօղոսեան
ՍԵՐՆԹԱԿԱՆՑ
Ամարանի

ԳՐԱԴԱՐԱՆ

3120

# ՓՈՔՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԵԾ ՍԻՐՏ ՄԱՐԴԻՔԸ

# ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

## ՉՈՐՍ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ՅԱՒԵԼՈՒԱԾՈՎ ԹԱՐԳՄԱՆԵՑ
ՅԻՏԱԼԱԿԱՆԷ Ի ՀԱՅ

ՅՈՎՍԷՓ ՊԵՏՐՈՍ ԹԱՎՈՒԴԵԱՆ



Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԱՊԵԱՆ
1841 = ՌՄՂ

# ԴԵՐԱՍԱՆՔ

ՎԱՀԷ · Սուրհանդակաց իջեւանի կառավարիչը․

ՀՐԱՀԱՏ ։

ՀԱՐԻՒՐԱՊԵՏ մը ։

ՀԱՄԱԶԱՍՊ ։

ԲԱԲԿԷՆ · Կենցաղակից ընկերուէ մը Վ.ժառոր ։

ՍՄԲԱՏ · Բաբկէնին տղան ։

ՄՈՒՇԵՂ ։

ՓԱՌՆԱԿ ։

ԹԱԹՈՒԼ ։

ԽՈՐԷՆ ։

ԳՈՒՐԳԷՆ · վարժապետ } երկուքը եղբայր ։
ԽՈՍՐՈՎ · հայր

ՎԱՂԱՐՇ } Գուրգէնին տղաքը ։
ԱՐՏԱՒԱԶ

ԱՐՇԱՄ } Հրահատին եղբօրը տղաքը ։
ԱՇՈՏ

ՆԱՒԱՍԱՐԴ · Սրճավաճառ ։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ մը ։

*Տեսարանը է Ամերիկու փոքրիկ քաղքի մը մէջ ։*

# ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

## ՏԵՍԱՐԱՆ Ա.

(Արձարանով հրապարակ մը։)

ՎԱՀԷՆ արձաններէն դուրս կելլէ ու ՆԱՒԱՍԱՐԴԻՆ կըհանդըպի որ ներս պիտի մտնէ։

Վահ. *Այ՛, ինչ պիտի ըլլայ այն բազմութիւնը որ՞ սուրհանդակաց իջեւանը հաւաքուեր են։*

Նաւ. *Չե՞ս գիտեր. կըսեն թէ սա օրերս Թագաւորը պիտի գայ. քանի կառք որ գայ դուրսէն՝ ժողովուրդը իրար կանցնի։ Աս առտու հագուած սըգ-ուած կախարդ մը եկաւ, ու ամէնն ալ կըսէին թէ Թագաւորին մարդոցմէն է։ Հիմիկ ալ հարիւրապետ մը եկաւ հին կառքով մը, ու ամէն*

85-2

## ԴԵՐԱՍԱՆՔ

ՎԱՀԷ · Ասպարհանդակաց իշխանին հաւատարիմը։
ՀՐԱՀԱՏ ։
ՀԱՐԻՒՐԱՊԵՏ մը։
ՀԱՄԱԶԱՍՊ ։
ԲԱԲԿԷՆ · Հենցաղահից ընկերակէ մը Դծաւոր։
ՍՄԲԱՏ · Աշխէնին տղան ։
ՄՈՒՇԵՂ ։
ՓԱՌՆԱԿ ։
ԹԱԹՈՒԼ ։
ԽՈՐԷՆ ։
ԳՈՒՐԳԷՆ · Վարժապետ } Երկուքը եղբայր։
ԽՈՍՐՈՎ · Հայր
ՎԱՂԱՐՇ } Պարսկէնէն տղաքը։
ԱՐՏԱՒԱԶ
ԱՐՇԱՄ } Հրահատին եղբօրը տղաքը։
ԱՇՈՏ
ՆԱԽԱՍԱՐԳ · Արծաւաձա ։
ՍՈՒՐՀԱՆԴԱԿ մը։

*Տեսարանն է Ս ենեկիու փոքրիկ քաղքի մը մէջ։*

[illegible]



# ԱՐԱՐՈՒԱԾՔ ԱՌԱՋԻՆ

## ՏԵՍԱՐԱՆ Ա.

(Արքայական հրապարակ մը։)
ՎԱՀԷՆ որ արքայենէն դուրս կելլէ ու ՆԱԻԱՍԱՐԴԻՆ կը հանդիպի որ ներս պիտի մտնէ։

ՎԱՀ. Ի՛, ի՞նչ պիտի ըլլայ այն բազմութիւնը որ սուրհանդակաց իջեւանը հաւաքուեր են։

ՆԱՒ. Չե՞ս գիտեր. կըսեն թէ աս օրերս թագաւորը պիտի գայ. քանի կառք որ գայ դըսէն՝ ժողովուրդը իրար կանցնի։ Ու աւատու հագված սըգ-ված կախարդ մը եկաւ, ու ամէնն ալ կըսէին թէ թագաւորին մարդոցմէն է։ Հիմակ ալ հարիւրապետ մը եկաւ հին կառքով մը, ու ամէն

մարդ իրար զիրար կը հրէ բան հար-ցընելու համար անոր ։

Պաշ. Ա՛տ ինչ խենթութիւն է ։

Նաւ. Ժողովուրդին հետաքրքրութիւնը ու-սէրը որով կը փափագին իրենց թա-գաւորը տեսնելու որ գութ ունի իրենց վրայ, կընեն աս գործքերը ու-զանազան կարծիքներ ընել կուտան ։

Պաշ. (Մօտենալով) Ա՛հա ան հարիւրապետը ։

---

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՀԱՐԻՒՐԱՊԵՏ մը ճանանչ հագուստով՝ որուն բնեբուն բերանը, շրջապատը, ու ձեռքէ ջապաւը ջարդեր է, ու վէրքերը։

Հար. (Մէկ՚ի սրճարանը նայելով) Թողու՛ ըրէ (սրճավաճառ նաւաստրդին) Ա՛ս-կա սրճարա՛ն է ։

Նաւ. Հրամմե՛րես պա՛րօն . ես ալ տէրն եմ ։

Հար. Գաւաթ մը ջո՛ւր տուր ինծի ։

Նաւ. Շա՛տ աղէկ ։ (Կերթայ)

Հար. (Մէկ՚ի վահէին նայելով ու Գըլխար-կը հանելով) Ծառայ եմ պա՛րօն ։

Պաշ. Ու ես ծառայ եմ ։

Հայր. Կարծեմ որ սա քաղքէն ես:

Պօղ. Հրամմէ՛ր ես:

Հայր. Կաղաչեմ զուրցես ինծի ասկէց Փատուա քանի՞ ժամ է

Պօղ. Վեց ժամ է:

Նու. (Կուգայ գաւաթ մը ջրով) Հրամմէ՛ պարոն:

Հայր. (Կը խմէ ու ետքը բաժակը կը տանէ ոսկի մը կուտայ):

Նու. Պա՛րոն ես ջուր չեմ ծախեր, խաղվէ կը ծախեմ:

Հայր. Խիստ աղէկ. երբոր խաղվէ բերես նէ ան ատենը տո՛ւր ինծի ոսկիին մնացածը:

Նու. (Ոսկին առնելով) Հիմակ կերթամ շուտով կեփեմ խաղվէն: (Նայելով ոսկիին) Ասիկա Վենետիկու ոսկի մըն է. իմ խանութս ասանկ բաներ չի մտներ. չիյտեմ որդեօք այնչափ ստակ ունի՞մ որ աւրեմ: (Կերթայ):

## ՏԵՍԱՐԱՆ Գ.

### ՎԱՀԷՆ ՈՒ ՀԱՐԻՒՐԱՊԵՏԸ

Հար. Ա՛ս բանը ի՞նչ պիտի ըլլայ պարօն։

Վահ. Ինչպէ՞ս բան է։

Հար. Պօրեստէն մինչև հոս ձի չի գտայ. հոս ալ ամենևին չի կայ. ի՞նչ պիտի ըլլայ ասիկա. ես ճամբա պիտի ելլեմ։

Վահ. Ա՛սիկա շատ դժուարին է։

Հար. Ինչո՞ւ։

Վահ. Հարկաւ լսած ես հրամանքդ որ Թագաւորը պիտի գայ, անոր համար բոլոր ձիերը վար են դրեր իրեն ու իր մարդոցը համար։

Հար. Ո՞վ ըրաւ աս հրամանը։

Վահ. Մ՛եր քաղաքապետը։

Հար. Ես աղէկ գիտեմ որ աս հրամանը Թագաւորին գիտնալովը չէ։

Վահ. Թագաւորին վըր ունեցած սէրը ու յարգը այսպէս ընել տըվաւ քաղաքապետին որ անանկ բարեբար Թագաւորի մը համար պէտք եղած բաները առաջուց հոգայ։

Հար. Ես գրաւ կը դնեմ որ երկու կամ չորս ձի հերիք են Թագաւորին։

Վաճ. Կարելի է որ տանիկ ըլլայ:

Հար. Ո՞րն է սուրհանդակաց իջևանին կառավարիչը:

Վաճ. Հրամմե՛րես պա՛րօն:

Հար. Կըցանկամ հետը խօրաթելու:

Վաճ. Հրամմայէ՛:

Հար. Ի՞նչ. դո՞ւն ես արդեօք:

Վաճ. Հրամմե՛րես:

Հար. Պարօն Սահէն հրամմա՛նքդ ես:

Վաճ. Հրամմե՛րես. քու ծառադ:

Հար. Իրուկին քաղաքավարութիւդ շատ կը յարմարի գովեստին որ ինծի զուրցեց մէկը քու վրայօքդ:

Վաճ. Ո՞վ է արդեօք:

Հար. Պրեստեցի ազնուական մը որ երէկ ինծի շատ պատիւ ըրաւ. (Տալով նամակ մը). Ա՛ս թուղթէն կը հասկընաս:

Վաճ. (Կառնէ նամակը ու կըբանայ կըկարդայ աս խօսքերը). „Պա՛րօն Սահէ.
„Ա՛ս թուղթը հրամմանոցդ բերողը, որ
„դիպուածով ճանչցայ ու իմ տունս
„բնակեցաւ, շատ սիրելի ու չի գըտ-
„նըված մարդ մըն է իր մաքին ու ա-
„նուշ բարքին կողմէն: Դու գիտես
„որ ես աղէկ մարդ կըճանչնամ,
„ուստի քեզի կը յանձնեմ զանի:

„ Իմ մարդը իր զուարճութենը համար
„ ճամբորդութի կըլնէ ու դու ալ իրեն
„ օգնելէդ ու պատիւ ընելէդ չես
„ զղջար ։ Ի՛նչ բան որ իրեն հարկա-
„ ւոր է՝ հոգա բան մը մի՛ խնայեր „ ։

Նուաստ բարեկամ քո Աշհան
Արծրունի ։

Ուրախ եմ ․ հրամանքդ շատ վարկումունիս եղեր անանկ բարի մարդու մը քով ։

Հայր ․ Կը ցանկամ հրամանոցդ քովն ալ նոյն վարկումը ունենալ ։

Պահ ․ Ո՛հ ․ ունիս ունիս ․ ըսէ՛ ինչ բան որ պէտք է քեզի՝ ձեռքէս եկածին չափ կընեմ ։

Հայր ․ Ես միայն երկու ձի կըխնդրեմ կառքի , որ ճամբա ելլեմ ։

Պահ ․ Պարօն ․ հրամանքդ ըմա՛ն ինէ այն բանը կուզես որ իմ ձեռքս չէ ։ Դուն գինուոր ես ու ինէ աղէկ գիտես ինչ ըսել է մեծերու հնազանդիլը ։ Յատուկ պատուէր եկաւ ինծի որ նայիմ՝ մէկուն ձի մը չի տըրվի մինչև որ հրաման ըլլայ ։ Կարծեմ որ հրամանքդ ալ զիս չես բռնադատեր մեծիս անհնազանդ ըլլալու ։

Հար. Իրաւունք ունիս. բայց այդ բանը
շատ դժուար կուգայ։

Պատ. Կուզես նէ ես երկու ձի ու կառք
մը ունիմ տունս՝ քեզի կուտամ
գործածէ մինչև ուր որ կուզես։

Հար. Շատ շնորհակալ եմ քենէ. բայց
ճամբորդութիւն ըրած ատենս կուզեմ
որ կրակի պէս երթամ։

Պատ. Աղէ՛կ. իմ ձիերս ալ կրակի պէս
կը վազեն։

Հար. Պարո՛ն, իմ սովորութիւնս է՝ երբոր
իջեւանը ձի չի գտնեմ, ուրիշին բեռ
ըլլալ չեմ ուզեր. զէնչունի կըս-
պասեմ։

Պատ. Անանկ է նէ հրամմէ՛ իմ տունս բը-
նակէ։

Հար. Ատ ալ չեմ կրնար. ես կուզեմ ին-
քիր գլխուս ըլլալ. երկու խուց եմ
բռներ՝ հոն կերթամ. այսու ամենայնիւ
խիստ շատ շնորհակալ եմ քենէ։
Կուզեմ գիտնալ թէ արդեօք աս
քաղաքը կենցաղակից ընկերութիւն
ներ կա՞յ։

Պատ. Հրամմէ՛րես. մէկ կենցաղակից ըն-
կերութի մը կայ. բայց ամէնն ալ
մեծամեծ ազնուականներ են։

Հար. Արդեօք աս իրիկուն ալ կա՞յ։

Վաճ. Այո . և որովհետև Թագաւորին գալուն կապասեն , անոր համար մեծ պատրաստութիւններ կան , ու միտք ունին Թագաւորը իրենց ընկերութեանը ժողովին հրաւիրել :

Հայր. Շատ կը ցանկամ ատ ընկերութե̃ մէջ ես ալ գտնուելու :

Վաճ. Ես իմ ձեռքէս եկածը կընեմ . բայց որովհետև պզտիկ քաղաքի մը մէջ ենք , ամմէն մարդ կուզէ մե-ծու̃ի ծախել . ու իրենցմէ վար մար-դոց հետ տեսնըվիլ չեն ախորժեր :

Հայր. Ինչ ըսել կուզես :

Վաճ. Մեր մեծամեծները շատ կըպար-ծին իրենց ազնուականութե̃ը վր̃ . ու եթէ ատանց պաշտօնի կամ աղ-քատ մարդու մը մօտենալու ըլլան՝ գիտեն թէ կաղտոտին :

Հայր. Արդեօք իրաւցընէ ազնուական են :

Վաճ. Իրենք անանկ կըսեն ու անանկ կը հաւատան : Բայց դու պա՛րօն հաս-կընալու ես այս խօսքերէս որ հը-պարտութիւնն ու խաբէութիւնը իրենց փոքրոգութե̃ ու տգիտութե̃ նշաններն են . և ճշմարիտ ազնուա-կանը է առաքինի առատասիրտ ա-ռանց նախապաշարման ու կարօտ չէ

ասանկ պարապ միջոցներ գործածել՝ մեծնալու համար։ Բայց այս մեր ազնուականները քիչ ատենի մէջ հպարտացան գոռոզացան ու ինքը-զինքնին մեծ մարդոց տեղ են դրեր, թէև ափերնուն մէջ իրենց հին արուեստին կոշտերը դրած են։

Հայր. Դու շատ հետաքրքրութիւն կը շար-ժես զանոնք տեսնելու. կաղաչեմ որ զիս անոնց ժողովքը տանիս։

Վահ. Դու ինծի հոս սպասէ հիմա կու-գամ։ (կերթայ)

---

## ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՀԱՐԻՒՐԱՊԵՏ, ՀՐԱՀԱՏ, ՀԱՄԱԶԱՍՊ

Հար. Ահա խմուղած բաներս սուտ են. ձեռքէս եկածին չափ ճանչնալ ա-ռանց ճանչցըվելու։ Մարդոց մո-լութիւներն ու առաքինութիւնները իմանալ՝ իմ խնամքիս ու նախատե-սութեանս առարկան է։

Հրա. (Համազասպին) Կարծես թէ սա ա-տեն կենցաղակից ընկերութե ժո-

ղովքին տեղը մարդ կա՞յ ։

Համ. Զէ՛ պարոն. կուզեսնէ սա արձարա-նը քիչ մը նստինք ։ (կերթան արձարանը)

Հար. (Ալը Բարեկէ ղանանէ ու ամանէ ալ Բարեկը չաւնէն) ։

Համ. Ո՞րծ. Նաւասարդ ։

---

## ՏԵՍԱՐԱՆ. Ե.

### ՆԱՒԱՍԱՐԴ ՈՒ ՎԵՐԻՆՆԵՐԸ

Նաւ. Հրամայէ՛ ։

Համ. Երկու գաւաթ խաղվէ բե՛ր մեզի ։

Նաւ. Խիստ աղէկ ։ (Հեռանալէն) Հի-մակ հրամմանոցդ ալ կը բերեմ պա-րոն ։ (Կերթայ՝ ետքը կու գայ) ։

Հրա. Սա հարիւրապետը դրսեցի է ։ (Հա-մոզուելէն)

Համ. Բանի մը օր է որ թագաւորին գա-լուն պատճառաւը հարիւրապետներ հազարապետներ կանցնին կը դառ-նան, ու թագաւորը դեռ չի գար ։ Մեր ազնուականներն ալ կը կար-ծեն թէ իրենց ընկերութեը ժողով-քին պէտի գայ թագաւորը . բայց

ես չեմ հաւատար։

Հրց. Ինչո՞ւ չես հաւատար. Թագաւորին խոնարհութիւնը չեյտե՞ս, ինչպէս որ պարոն Նարեկենին ալ կըսէ. Աղէկ միտքս եկաւ. իրա՞ւ է որ պարոն Նարեկենին տղան Գէորգէն վարժապետին փեսայ է եղեր։

Հան. Իրաւ է։

Հրց. Ա՛յ հայրը ի՞նչ կըսէ։

Հան. Հայրը շատ բարկացեր է։

Հրց. Տես ինչ անմտութիւն է. (ծաղր ընե-լով.) ինծի հարցընես նէ ամենևին զէն չունի։

Հան. Ի՞նչ կըսես. անանկ մեծի մը տղայ վարժապետի փեսա՞յ ըլլայ։

Հրց. Մոռցե՞ր ես որ Նարեկենին տղան ջաղացպանի մը թոռ է, ու իր ազ-նուականութիւնը ջաղացքէ մը բերեր է։

Հան. Ես հին սատենի եղած բաները չեմ նայիր. հիմակվանը կը նայիմ։

Հրց. Իրաւունք ունիս. մի՛ զի հին բանե-րը նայելու ըլլայիր, քուկին հայրդ ալ միտքդ կուգար որ պշտամալ էր։

Հան. Ապրիս. կընայիմ որ դու ալ երբե-մըն կախորժիս ազնուականները ծաղր ընելէն։

Նա. (Կ'ուգայ Խաչվէին Գաւառնէրը Յէս-

ծը ու կապայ Հրահանգին ու Համաշխա-պին .) Հրամեցէ՛ք ։ (Կերթայ Հարիւ-րապետին) Հրամմէ՛ պարոն ահա խաղվէդ ։

Հայր . (Նաւաստիքին) Ո՞վ են աս երկու պարոնները ։

Նաւ . Ա՛ս քաղքին մեծամեծներէն են ։ Կեցէ՛ր ոսկիիդ մնացածը տամ ։

Հայր . Զէ՛մ ուզեր քեզի ըլլայ ։

Նաւ . (Ձը՛, գաւաթ մը խաղվէին մէկ ու-կի՞ մը, աս ինտո՛ր մարդ է ։)

Հրա . (Խաղվէն իջնելէն ետև գաւառը կա-պայ .) Ո՛ւ ։

Հայ . (Գաւառը կապայ) Ա՛նկ խաղվէ մը որ Թոյն կըլլանի ։

Նաւ . (Ա՛իշտ սանկ կը զուրցեն . բայց վեց ամիս պէտք է որ խաղվէին ըս-տակը առնեմ ։)

Հայ . (Նաւաստիքին) Ո՞ւր . (Ո՞վ է ան հար-իւրապետը ։)

Նաւ . Զէմ ճանչնար պարոն ։ (կերթայ)

## ՏԵՍԱՐԱՆ · Զ։

ՍՄԲԱՏ, ՀՐԱՀԱՏ, ՀԱՄԱԶԱՍՊ, ՀԱՐԻՒՐԱՊԵՏ

Սմբ · (Դուռ եղած չերթայ հարիւրապետէն ·) (Թողութիւն ըրէ պարոն խօսք մը ունիմ քեզի ըսելիք ։)

Հար · Հրամէ՛ զրուցէ՛ ։

Սմբ · Պաղտուկ է խօսքս մարդ չիմանայ ։

Հար · (Կը հեռանայ Հրահատէն ու Համազասպէն ·) Հրամէ՛ հիմա մարդ չի լսեր ։

Համ · (Հրահատին) (Նայէ՛ նայէ՛ պարոն Բարեկենին տղան Սմբատը՝ հարիւրապետին հետ կը խօսի · կերեւի որ մէկըզմէկ կը ճանչնան ։

Հրա · Կարելի է ։

Հար · (Սմբատին) Ինծի կերեւի որ շատ վըշտացած ես · ըսէ՛ ինչ կայ ։

Սմբ · Թողութիւն ըրէ հարցընելուս · հրամանքդ Թագաւորին մարդոցմէ՞ն ես ։

Հար · Չէ՛ պարոն ։

Սմբ · Արդեօք գիտե՞ս երբ պիտի անցնի անկէց ։

Հար · Ինչո՞ւ ինծի կը հարցունես ատիկա ։

Սմբ · Ոհ · Թագաւորին տղը պիտի կյ-



ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Пуб. Библиотека ՀԱՄՀ-ССРА

նամ՝ որ գթայ իմ վրայս ։

Հար · Ինչո՞ւ հանիր ։ Դու ո՛վ ես ։

Մէք · Իմ հայրս անանկ մարդ մըն է որ ինծի մեծ վէն հասցնել կուզէ · միայն թէ իր աղնուականութիւնը պաշտպանէ · · · բայց անօգուտ է քեզի զուրցելս երբոր չես կրնար ինծի օգներ ։

Հար · Ո՛վ գիտէ · · · Անկաղ հանդիստ բանէ · · · կարելի է · · · Դուն ինծի աղէկ տղայ մը կերևնաս և զուցէ · · · Կրնա՞ս հաւատալ ինծի ։

Մէք · Տէր · ես ամէն լաւ մարդոց կը հաւատամ · եթէ դու ալ այնպէս ես , կը բանամ քեզի իմ վիշտերս ։

Հար · Կեցի՛ր · հիմա ժամանակ չունիմ · ու երկար ատեն չեմ կրնար խօսակցիլ հետդ այսչափ մարդոց առջև · աս իրիկուն սուրհանդակներուն իջևանը եկուր ժամը իրեքին · եթէ հոն չըլլամ՝ սպասէ ինծի ։ Կը խոստանամ քեզի որ եթէ օգնութեան կարօտ ես , պարապ տեղը հետս խօսած չես ըլլար ։

Մէք · Դու շատ յոյս կուտաս ինծի · բայց կուզամ կը հասկցնեմ քեզի գլխուս փորձանքը · հիմա իմացայ որ երևելի

համեստ մարդ մըն ես . դու անտարակոյս Թագաւորին բարեկամն ես . որչափ անանկ կը վկայէ , ու ա̄ծ ալ զիս մխիթարելու համար քեզ խրկեց :

Հար . Ես երևելի մարդ մը չեմ . բայց պատուոյ և համեստութե̄ բարեկամ եմ, ու կրնամ պաշտպանել անմեղները : Գնա ու ինծի սպասէ գիշերը :

Մէ . Շնորհակալ եմ տէր : (կերթայ)

Հրա . (Առնելով Համազասպեն հետ կը մօտենայ հարիւրապետին) Պարոն կերևի որ հրամանքդ օտարական չես աս քաղքիս մէջ :

Հար . Ինչէ՞ն :

Հրա . Կը տեսնեմ որ մերիններէն մարդ կը ճանչնաս :

Հար . Դիպուածը անանկ բերաւ :

Հրա . Ա ենոյէ՞ն կուգաս :

Հար . Հռոմէրես :

Համ . Կրնա՞ս մեզի նոր լուրեր տալ :

Հրա . Աղէկ մը դիտէ պարոն Համազասպ աս պարոն հարիւրապետը շատ կը նմանի Թագաւորին :

Համ . (Խնդալով) Հա՛ հա՛ հա՛ . Թագաւորին կը նմանի . աս ինչ շողոքորթութիւն է . երբոր մէկը գովելու ըլլայ՝ կըսկըսիք մեծերու նմանցընել :

Հրա. Ես մարդ չեմ շողոքորթեր · բայց իմ աչքիս անանկ կերեւայ ։

Հար. Ինչէ՞ն կիմանաս թագաւորին նը-մանելս ։

Հրա. Թագաւորին մէկ պատկերէն որ իմ տունս կայ , որուն շատ կողմը քեզի կը նմանի ։

Հար. Դու ծաղր կընես զիս ։

Հրա. Հաւատացի՛ր որ այդ ճակատի մա-զերը , պըռունկները , քիթը . . . .

Համ. Կերեւի որ պարոն Հրահատը քի-թէն կը ճանչնայ մարդը ։

Հրա. Ա՛հ շատ մի՛ զուրցեր · ես իմ ուզա-ծըս կըսեմ · քեզի՛ ինչ · դու իմ վար-պե՞տս ես ։

Հար. (Համազասպին) Դու սրդողեցուցիր զանի · ու զրկեցիր զիս անանկ բաղ-դաւորութե մը ուրախութենէն որ շատ կը հրապուրէ իմ անձնասիրութիս ։

Համ. Անանկ է նէ մնաք բարով · ու երբոր բաղդաւորութիւնիդ լմընցնէ՝ ինծի իմացուցէք ։ (Բարկանալով կ'ելնէ ։)

Հրա. (Այս է նախանձոտն ու անքաղաքա-վարը · զիս մինակ կը թողու , ու վը-րան խնդացնել կուտայ ։)

## ՏԵՍԱՐԱՆ Է.

### ՎԱՀԱՆ ԲԱԲԿԵՆԻՆ ՀԵՏ, ՀՐԱՀԱՏ, ՀԱՄԱԶԱՍՊ ԵՒ ՀԱՐԻՒՐԱՊԵՏ

Վահ. (Հարիւրապետին) Ներողութիւն ըրէ պարոն եթէ քեզի քիչ մը շատկեկ սպասել տուի. ահա հոս է ազնուական ընկերութեան ժողովքին մեծաւորը որ հետս գալ ուզեց ու կը ցանկայ քեզ ճանչնալ։

Բաբ. (Հարիւրապետին) Ծառայեմ պարոն։

Հար. Այդ շատ պատիւ է ինծի։ Հարկաւ լսեր ես որ ես կը ցանկամ մէկ ժամու մը չափ ձեր ժողովքը գտնուիլ։

Բաբ. Ես իմ կողմէս քու սիրոյդ համար ձեռքէս եկածը կընեմ։ Բայց շնորհք ըրէ ով ըլլալդ ճանչցուր. ես ժողովքին կանոնները պիտի պահեմ ու նայիմ որ անկարգութիւն մը չըլլայ։ Ո՞վ ես դուն։

Հար. Զինուոր։

Բաբ. Այդ գիտեմ. քու պաշտօնդ ի՞նչ է։

Հար. Զինուոր։

Բաբ. Այդ հերիք չէ. պէտք է մէկ պաշ-

տօն մըն ալ ունենալ ։

Հար · Հա՛ այս պատուական հագուստս իմ պաշտօնս է ։

Բաբ · Պաշտօնատար հարիւրապե՞տ ես ։

Հար · Զինուոր եմ ։

Բաբ · Ի՛նչ · էվէլ բան մը կուզէ, ըսի քեզի, որ իմ ազնուական ընկերներս ընդունիմ ։ Նշան ունի՞ս ։

Հար · Կեցի՛ր · (Կուրծքը կը բանայ ու վէհանձնութիւն կը ցուցնէ) Հա՛ երկու հատ գնտակի վէրք որ Սենետիկու ծեծին մէջ առի ։ Գնա՛ աս վէրքերուն արդիւնքը ներկայացուր յարգելի ժողովքին · ու ըսէ անոնց թէ՝ երբոր իրենք ուրախութիւն կընէին, ես աս ազնուականութեան նշանները առի, պաշտպանելով իրենց ապրանքն ու իրենց կեանքը ։

Բաբ · Ի՛նչ, ատոր նայինէ՝ ամէն հասարակ զինուոր ատանկ կրնայ ըսեր ։ Բայց եթէ զինուորը կը պատերազմի, մենք ալ ստակ կուտանք ։

Հար · (Ինքն իրեն) Տըղիս · այդ պատասխանը ըմա՛ն քեզի պէս ազնուականին կը վայլէ ։

Բաբ · Ուրիշ խօսք մը ունի՞ս ինծի ըսելիք ։

Հար · Ո՛չ ։

Բաբ. Սնանկ է նէ քեզ չեմ կրնար ընդունիլ աղնուականաց ժողովքին մէջ։

Հրա. (Բաբգէնէն) Մտածէ՛ մէյմը . . .

Բաբ. Ի՞նչ մտածեմ. դու ինէ աղէկ գիտես. պաշտօնաւոր չըլլայնէ չեմ կրնար ընկերութեան ժողովքը մըտցընել. Մնա՛ք բարով։ (կերթայ)

Համ. (Ապրի՛ս. շատ հաւնեցայ այդ խօսքերուդ։)

Հրա. Ա՛հ. աս նախատինքը ինծի է։

Հար. Մ՛ի բարկանար. ես ատանկ բաներուն վրայ կը խնդամ ու կը համբերեմ։ Կերեւի որ աս կենցաղակից ընկերութեանը մէջ երեւելի մարդիքներ կան։

Հրա. Սնա՛նկ գիտես։

Համ. Ի՞նչ կըսես պա՛րօն։ (Հրահատէն)

Հար. Կուխ մընէք ինծի համար։ Ես կը յարգեմ ժողովքները ու չեմ սըրդողիր։

Հրա. Երկան չըննէնք։ Պա՛րօն կը ցանկա՞ս իրաւցընէ հրամանքդ ընկերութեան ժողովքին երթալ։

Հար. Եթէ կարենայի երթալ աւանց փորձանքի մը, շատ կը ցանկամ։

Հրա. Հրամմէ՛ եկուր իմ հետս։

Հար. Ետքը . . .

Հրա. Ետքը նայիմ ով կրնայ համարձակիլ իմ քովըս քեզ նախատել։

Վահ. Աս մարդը իրաւցընէ մեծ պարոն մըն է ու խիստ ազնուական է։

Հրա. Ես ալ զօրապետի մը եղբայր էի, ու զինուորին եղած նախատինքը ինծի է։

Հար. Շատ ուրախ եմ որ քեզի պէս պաշտպան մը գտայ։

Հրա. Կուգա՞ս հետս թէ չես իգար։

Հար. Ի՛նչ ըլլայ պիտի նէ թող ըլլայ, կուգամ հետդ։

Հրա. Հրամէ՛։

Հար. Խի՛ստ աղէկ։ (Հրաչեային հետ կ'եր-թայ ու Վահէն ալ ետեւէն։)

Հայ. Ասանկ հէ՛, զիս մոռցաւ, մարդու տեղ չի դրաւ, հարկաւ վրէժս կառնեմ անկէց։

ՎԵՐՋ

Ա. ԱՐԱՐՈՒԱԾՈՅՆ.

# ԱՐԱՐՈՒԱԾՆ ԵՐԿՐՈՐԴ

## ՏԵՍԱՐԱՆ Ա.

Նկարներով զարդարուած սրահ մը · քանի մը սեղանատախտակ թուղթ խաղալու ։

ՄՈՒՇԵՂԸ սեղանատախտակի մը առջև նստած ԹԱԹՈՒԼԻՆ հետ որ գիրք մը ունի ձեռքը ։ ԽՈՐԷՆԸ ուրիշ սեղանատախտակի մը առջև նստած ՓԱՌՆԱԿԻՆ հետ ։

Մու. Ա՜յ · կարդալու համա՞ր ես եկեր հոս , թէ չէ ուրախութիւն ընելու ։ ( Խնդալէն · )

Թաթ. Խրատունք ունիս ։ (Գոցելով գիրքը ու գրպանը դնելով · ) բայց այս գիրքը ինծի խիստ սիրելի է · Անգղիայէն բերել տուի ու մէկ պղտիկ գանձ մըն է ։

Մաւ. Ի՛նչ պարապ բաներ են․ ուրախու-
թիւննիս նայինք։

Թաթ. Ի՛նչ․ կարդացե՞ր ես այս գիրքը։

Մաւ. Ո՛չ․ չեմ կարդացեր․ բայց ես եր-
բոր գիրք կը տեսնեմ՝ կը ձանձրա-
նամ ու ընկերախէն աւելի քունըս
կը բերէ։

Թաթ. Ափսո՜ս․ այդ խօսքը ինչպէս հա-
մարձակ կելլէ քեզի պէս ազնուա-
կանի մը բերնէն․ շատ կը մեղքնամ
քեզ որ կարդալու զուարճութենէն
զուրկ ես մնացեր։ Իսկ ես միշտ
գիրքը քովէս պակաս չեմ ըներ․ ու
երբոր րոպէի մը չափ պարապ ատեն
գտնեմ՝ իսկոյն կը հանեմ գրպանէս
կը կարդամ․ այս գիրքը գոնէ քսան
անգամ կարդացեր եմ․ ասանկ կընեմ
ուրիշ գիրքերն ալ մանաւանդ երբոր
բարոյական փիլիսոփայութեան կը
վերաբերին։

Մաւ. Ի՛նչ կըսես․ փիլիսոփայ մ՚ալ ես դուն։

Թաթ. Ես շատ կը սիրեմ փիլիսոփայութիւնը։

Մաւ. (Շա՛տ բան․ ձեռով մէկ գիրքը մը
կըրնայ կարդար , ու փիլիսոփայ
եմ կըսէ․ ես որ չորս տարի ուսման
մէջ եմ պարապեր , լաթերով էշ մըն
եմ։) Ի՛նչ կըսուի այդ գրքին ա-

նունը. ինչ կայ մէջը գրած ։

Թաթ. Ասոր անունն է Ընտապատուէ Նարտաշայէն ու մէջի գրածներն ալ բարոյական փիլիսոփայութիւն են ։ Ասով կըսորվըվի աշխարհի մէջ ինչպէս պէտք է վարվիլ, ասով կըրնայ շտկեր մարդս ինքզինքը ։ Այս գիրքը ամէնուն կըրնայ խրատ ու բարի օրինակ ըլլար ։ Ասանկ գրքերուն ուսումը մէկ պարտեզ մըն է զուարճալի. մէջի սորվեցուցած բաները ամէն մէկը մէյմէկ ծաղիկ են. մտքիդ աչքը վըրան կընայի կըզմայլի, անանկ որ ուրիշ ամէն բաներ կըմոռնաս ։

Մաս. Չի գիտցայ չի գիտցայ. աշխարհիս մէջ զմայլելու բան սաւկն է. կարդալը սաւկ կըվաստըկցընէ՞ ։

Թաթ. Մ՚եղք քու տգիտութեդ վըր. չես գիտեր որ կարդալու խաւէ իյնալը ուսում սորվիլը հիմն է ամէն վաստակի. անով միտքդ ամէն բանի կը բացվի կը բարակնայ. մտքի բարակութիւն ալ սաւկ վաստըկելու ամնա առջի պէտք ըլլալու բանն է ։ Աս բանիս իրաւ ըլլալը ասկէց հասկըցիր. նայէ՛ ան ազգերուն վրայ՝ որոնց մէջ որ շատ կարդալ գրել կայ, կը

տեսնես որ շատ աղ հալատուն կայ։

Մար․ Իմացայ իմացայ · ըմբռնեցուր խօսքդ։

Փաս․ (Մուշեղին) Հասկըցա՞ր ինչ անբանի խօսքեր կը զուրցէ պարօն Քաթուլը։

Մար․ Ինկա ինքզինքը Աթենացի փիլիսոփայի մը տեղ է դըրեր · բայց ըսած խօսքերը անանկ սխալ են որ ամմէն մէկը քանանկան ապատկի արժան է։

Փաս․ Ցաւակից ըլլալու ենք · իր կրթութիւնը անանկ է եղեր։

Մար․ Իր հայրը ինչ էր որ · մաքավաճառ չէ՞ր։ (Նայելով) Հա՛ ժողովքին մեծը կուգայ։

---

## ՏԵՍԱՐԱՆ · Բ։

### ԲԱԲԿԷՆԸ ՈՒ ՎԵՐԻՆՆԵՐԸ

Մար․ Ո՜յ · ո՞վ է այն օտարականը որ կուզէ մեր ժողովքը գալ։

Բաբ․ Ես չեմ ճանչնար։ Կը զարմանամ պարօն Ահէին վըրա որ իր չի ճանչցած մարդը հոս բերել կուզէ։

Խոր․ Ընդունեցի՞ր։

Բաբ․ Ինծ՚ չըսէ ։

Խաչ․ Հապա ի՞նչ պատուանունով կուզէ դաւ․ ․ ․

Բաբ․ Ես ի՞նչ գիտնամ․ կարծեց թէ իր թուրովը մեզ պիտի վախցընէ ։ Ես իրմէն ապացոյցներ ուզեցի պաշտօնաւոր ըլլալուն վրայ․ բայց պատասխան չի կրցաւ տալ ։

Թաթ․ Անանկ է նէ մեծ մարդ մը չէ ։

Բաբ․ Մէկ անծօթ հարիւրապետ մըն է․ որ տասնապետուէ նոր եղեր է հարիւրապետ, ու եկեր մեզի փաք փուք կընէ ։

Խաչ․ Անանկ պիտի ըլլայ ։

Թաթ․ Աղէկ ըրիր չընդունելդ․ պէտք չէ որ մեր ազնուականութիւնը անանկ ոչինչ մարդոց ոտքին տակը ձգենք ։

---

## ՏԵՍԱՐԱՆ․ Գ․

### ՀԱՄԱԶԱՍՊ ԵՒ ՎԵՐԻՆՆԵՐԸ

Համ․ Պարօններ․ ձեզի աղէկ լուր մը պիտի տամ ։

Թաթ․ Ի՞նչ է ։

Համ. Մ՚եր կամքին մեր հրամանին դէմ ան հարխուրապետը հիմա հոս պիտի գայ։

Բաբ. Ի՞նչ կըսես։

Համ. Մ՚եր մեծապատիւ պարոն Հրահատը ծառը կընէ ու ոչինչ կըսեպէ մեր զգուշութիւնները. հարխուրապետին թեւը մտաւ ու տարաւ իր հետը, գոռոզանալով անոր վրայ ըրած պաշտպանութեանը վրայ։

Խոր. Ա՚ն նախատինքը ամմէնուս ալ է, մանաւանդ իմ ազնուականութեանս։

Մաւ. Ա՚ն պարոն Հրահատը շատ յանդըգնութիւններ կընէ ու ամենուն մարդ-չի յարգեր։

Խոր. Ինքը զինքը կըկարծէ թէ Տիգրան թագաւորին ցեղէն եկած է. ու ամմէն բան իրեն թոյլ տրուած կը համարի։

Թաթ. Մոկէց ՚ի զատ խենթին մեծն է. ու երբոր հարխուրապետներ ու օտարականներ տեսնէ, կուզէ հետերնին բարեկամանալ։

Համ. Տեսնէիք. ի՞նչ պատիւներ ի՞նչ շողոքորթութիւններ ըրաւ հարխուրապետին։

Խոր. Չգիտեր իր պատիւը պահել։

Թաթ. Հպարտ է։

Խոր. Իր պատիւը բանի մը տեղ չի դներ ։

Փառ. Իրաւունք ունիս . իր պատիւը բանի տեղ չի դներ ու երևելի պարօնի մը պէս չի վարվիր ։

Բաբ. Ես չեմ կրնար համբերեր այս մեզի ըրած նախատինքներուն . Հարիւրապետը ամենևին հոս պիտի չի մնայ ։

Խոր. Գիտես ինչ են հարիւրապետները . Թուրքերնին քաշելու համար մէկ խօսք մը հերիք է ։ Զգո՛յշ կեցիր որ աղիքներըդ արևուն չի ցուցունէ .

Բաբ. Հապա ինչ ընենք ։

Մար. Ինծի յանձնեցէք այդ բանը . եթէ կուզէք վրէժ առնել հարիւրապետէն , ամէնքդ ալ խաղաղ ու անխօսուկ նստեցէք . միայն ես ինչ կընեմ նէ դուք ալ անանկ ըրէք ։

Բաբ. Բայց ես չեմ կրնար համբերեր . . .

Մար. Անգամ մը միայն իմ ըրածիս պէս ըրէք իմ կարգադրութիւններուս հնազանդեցէք . ետքը շատ գոհ կըլլաք ։

Խոր. (Նայելով) Ահա՛ կուգան ։

Մար. Լո՛ւռ կեցէք . ամենևին պատասխան մի՛ տաք . մենք մեր գործը նայինք . ու չի տեսնելու զարնենք . (Ամէնն ալ

կերթան նստելու ու կը պատրաստուին խաղալու։)

---

## ՏԵՍԱՐԱՆ · Դ

### ՀՐԱՀԱՏԸ ՀԱՐԻՒՐԱՊԵՏԻՆ ՈՒ ՎԱՀԷԻՆ ՀԵՏ, ԵՒ ՎԵՐԻՆՆԵՐԸ.

Հրա. Կը յարգեմ ու կը պատուեմ այս պարօնները։

Հար. Ծառայ եմ այս ազնուական ժողովքին։

Վահ. Ծառայ եմ ամէնուդ։ (ամենուն ձեռը չի շարժեր։)

Հրա. Ձեր յարգութեան առջին համարձակեցայ ներկայացնել այս օտարական պարօնը. ասիկա հպատակ ըլլալու չէ մեր թէութիւններուն . . . բայց մէկ հարիւրապետ մը միշտ ազնուական է։

Հար. Ապահով եղիք որ ես ձեր կանոնները չեմ փոփոխեր և անիրաւութի ալ չեմ ըներ ձեր ազնուականութեանը։

Վահ. Միայն այս անգամուս համար թողութի կը խնդրենք ու կը հաւատամ

որ հրամանքնիդ ալ կըներէք մեզի ։

Թաթ. (Աչքով կընէ դէպ նաժիշտներուն որ պատասխան չի տան ։)

Հրա. (Մօտենալով Խաթունին) Ինչպէս ես պարոն Խաթուլ ։ (Հարիւրապետին) Մռայջեկօ պարոն հարիւրապետ. ահա հոս է մեր պինտ քաղցրաբարոյ և երևելի պարոններուն մէկը ։

Հար. (Մօտենալով դէպ ՚ի Խաթունին.) Շատ կուրախանամ հրամանքդ ճանչնալուս ու յարգելուս վրայ ։

Թաթ. (Մօրեօլ կըթըթվէցընէ ու անտէն կը դարձընէ ։)

Հար. (Հրահատին) Չի՞ խօսիր ։

Հրա. Խեղճը խաղին գացած պիտի ըլլայ թողութի՛ ըրէ ։ (Խաթունին) Ինչո՞ւ պատասխան չես տար այս յարգելի պարոնին որ իրեն պարծանք կըհամարի քեզ յարգելը ։

Թաթ. Շնորհակա՛լ եմ ։ (առանց երեսը նայելու)

Հար. (Դառնալով դէպ ՚ի Խօրէնին) Հրամանքդ պա՛րոն ինչպէս ես խաղին մէջ. վաստըկեցա՞ր արդեօք ։

Խոր. (Խաթունին պէս երեսը կը դարձընէ ։)

Հար. (Հրահատին) Լեզու չունի՞ն այս պարոնները ։

Հայր. Ա՛հ. չէ՛ չէ՛. եթէ խօսելու ըլլան գլուխ կը ճաթեցընեն.

Թատ. (Նայեցէք ինչ կըսէ անզգամը.) (ԻՆՔՆԻՐԵՆ)

Հայր. (Ա՛ս իրենց լուռ կենալը բան մը կը նշանակէ։)

Հայր. (Ես ալ կը կարծեմ որ հիմակ բան մը պիտի ըլլայ.) Մէկ մ'ալ մօտեցիր պարօն, ու կը տեսնես որ անկիրթ ու անքաղաքավար չեն.

Մայր. (ԹՈՒՐՔԵՐԷՆ ՏԱՃԿԷՆ) (Պետօինը անցնելու)

Հայր. Ես չեմ կրնար համարձակիր մէկիմ ալ խօսելու հետերնին. այսու ամէն . . . (ՄԱՇՏԵՆԵՆ ՔԱՂԸ ՆԸՆՈՐԷ.)

Մայր. (ԻՐԵՆՑ ՆԸՀԵՏԱՆԱՅ ՈՒ ՀԱՐԵՐԱԴԵ-ՏԵՆ ՆՕՏԵՆԱՇԷՆ ԱՆՀԱՆԳԻՍՏ ԵՂԱԾ ՆԸ ՑԸՑԸՆԷ ՇԻՆՔԸ.)

Հայր. Խոնարհութիւն ըրէ. կարծեմ որ նե-ղութիւն տըվի քեզի.

Մայր. (Ս ԷՐԷ ԸՐԱԾԻՆ ՊԷՍ ՆԸՆԷ.)

Հայր. Աթէ իմ մօտենալս ձանձրութիւն կուտայ քեզի . . .

Մայր. (ՍԷՆԷ ՆԸՆԱՅԷ.) Օղաու ոչ եմ. (ԿՕ-ՆԱՐՀՈՒԹԻՒՆ ՆԸՆԷ ՈՒ ԽԱԹՈՒՇԻՆ ՀԵՏ ՆԵՐԹԱՅ.)

Հայր. (Մ՛պրիս. ահա սաանկ կուզեմ.)

Հայր. (ՀԱՐՀԱՏԻՆ) Մ՛եկնա գնաց.

Հրա. (Ծաղր ընելով) Ա՛հ. ատիկա բան մը ըսել չէ. Հոս ատանց նկատմամբ կերթան ու կուգան. քաղքին սովորութիւնը ասանկ է.

Հայր. (Դառնալով Խորէնին) Գո՛նէ հրամանքդ շնորհք ըրէ մի՛ սրդողիր ինծի.

Խոր. (Սեղմէ ու խոնարհութիւն մը ընէ) Անուշ բարով: (Սերթայ Փառանձէին հետ.)

Հայր. Ինչպէս որ կը տեսնեմ, այս պարոն-ներուն հետ բաղդը չի բանիր.

Հրա. (Ա՛հ անզգամներ. հիմայ իմացայ որ խօսքերնին մէկ են ըրեր.)

Համ. (Շատ ուրախացայ. աղէկ եղաւ.)

Հայր. (Մօտենալով տէր 'ի Համազասպին ու Ռաբջէնին.) Պարոններ կը յուսամ որ դուք աւելի խոհեմ ըլլալով կը ներէք ինծի.

Համ. Անուշ բարով: (Սերթայ Ռաբջէնին հետ.)

Հայր. Ի՛նչ քաղաքավար ընդունելութիւն ըրին մեզի.

Հրա. Պարոնները ու ազնուականները ա-ներեւոյթ եղան.

Վահ. Ի՛նչ ազնուականներ.

Հայր. Անանկ նանիկ ըսելով մինաւորիկ մը-նացինք.

Հրա. Աղէկ է մինակ մնալ քան չար ըն-կերներու հետ ըլլալ։ (Աս բանը զիս շատ կը բարկացընէ։)

Հար. Աս իրենց ըրածին պատճառը ի՞նչ է։

Պատ. Այդ կրնաս գտնալ. դու իբրեւ տարօրինաւոր ու պաշտօն չունեցող մարդ մը հոս եկար. ուստի շատ մեծ յանցանք գործեցիր ազնուականու-թեան դէմ։

Հրա. Մի՛ նայիր ան խենթերուն ըրա-ծին. ներէ՛ ու բաւական համարէ յարգութիւնը որ ես ու այս պարօնը կընենք քեզի։ Նախապաշարումը աւելի զօրաւոր է սուտ ազնուա-կաններուն ու անկիրթ մարդոց մէջ. բայց ժամանակով ու կրթութիւն կը ջնջուին։ Հիմակ մէկ պարապ պատ-ուանունով մը փքացեր են. ու ասիկա կը խանգարէ իրենց տկար երեւակայ-ութիւնը որուն վրայ տիրեր է մեծութիւն ծախելու ախորժակը։ Բայց օր կուգայ որ կը տեսնեն ոչնչութիւնը, ու քաղաքավարութիւնը նախապատիւ կը համարին պատուանուններէն։ Քա-նի որ ասոնք իրենց տգիտութեան մէջ կը մնան, հարկաւ անխոնարհելի հը-պարտութիւն մը կունենան. աս հպար-

տութիւնը անանկ կամակորութիւն մը կը բերէ իրենց՝ որ ամօթ կը սեպեն պակսութիւնին շտկել, և իրենց խը-րատ տըվողին մտիկ ընել։ Իրենց պակսութիւնները շըտկելունին կը կարծեն թէ ինքը զինքնին կանար-գեն պըղտիկ կը ձգեն։ Ասոր պատ-ճառը նախապաշարութիւն է, որ է ան-բաժան ընկեր տգիտութեան․ մէյ մը միտքերնին անանկ են դըրեր չեն ու-զեր փոխել։ Ու որովհետև մեր ազ-գը իր ազգին վըր սէր չունի և ուրիշ ազգերու վըր շատ սէր կը ձգէ, կը նայի որ անոնց օգուտ ընէ, հիմակ ալ եթէ քու տեղդ մէկ օտարազգի մը ըլլար, հարկաւ շատ պատիւ պի-տի տեսներ հոս։

Հար․ Ուսկին խելացի խօսքերդ ճշմարիտ ազնուականութեան նշաններ են ու կը մոռցընեն ինծի այս փոքրիկ նախա-տինքը որ ինծի ըրին․ ես կը խնդամ անոնց ըրածին վրայ ու կը մոռնամ․ բայց կը ցանկամ որ ուրիշ ազգերէ աւելի իրենց ազգը սիրեն։

Հըտ․ Սիրտդ առնելու համար՝ տանս բը-նակութիւնը հրամանոցդ կընծայեմ։ Իրաւ է որ ազնուականութեան զար-

դարանք մը չես տեսներ , բայց անոր փոխարէն պարկեշտ ու անկեղծ ընդունելութիւն մը ։ Քրամէ՛ եկուր ․ պարօն Սահէն ալ մեզի ընկեր կըլլայ ։

Հար ․ Շնորհակալ եմ քուկին ըրած պատիւէդ բայց չեմ կրնար ընդունիլ ։ Մեր պարօնները գուցէ անխոհեմ տրամունքներով քու անունդ կարեն ։ Ինծի հիմակ կը վայլէ յարգել քեզի պէս պարօն մը որ իմ վրէ շատ վարկում ունի ։ Բայց կաղաչեմ զուրցէ ինծի ․ ո՞ւսկեց առաջ կուգայ այդ սէրը որ ունիս իմ վրայ ։

Հրա ․ Բարի համարումէն որ ունիմ բոլոր զինուորներուն վրէ որոնք հայրենասիրութիւն քաջութիւն հետ կը միացընեն ։ Իմ եղբայրս ալ զինուոր էր ։

Հար ․ Կուրախանամ որ պատուաւոր զինուորի մը եղբայր գտայ ։

Հրա ․ Բայց կը ցաւիմ որ ողջ չէ ։

Հար ․ Ա՛հ ․ մեռե՞ր է քու յարգելի եղբայրդ ։

Հրա ․ Քրամէ՛րես ․ Սենեակիս ծեծին մէջ ․ հարկաւ լսած ես Փառնհերմէհ զօրապետը ։

Հար ․ Փառնհերմէհ զօրապետը ․ խիստ աղէկ կը ճանչնամ ․ ․ ․ ․ և ով չէր գի-

տէր անոր առաքինութեան ու քա-
ջութեանը։ Երկու անգամներ գուն-
դին մէջ առիծի պէս ծեծկըվեցաւ
թագաւորին անձը պաշտպանելով․
ու մէկ անգամմալ ես վիրաւորեցայ
գնտակով մը երբոր անոր քովը կայ-
նէր էր։

Հրա․ Դու իմ սիրտս թունա կը հանես
եղբօրս գովելովդ։

Հար․ Շատ կը մեղքընամ․ անիկա ամէ-
նուն ալ սիրական էր․ մանաւանդ
թագաւորին։

Հրա․ Բայց կերևի որ թագաւորը մոռցեր
է զանի։

Հար․ Ինչէ՞ն։

Հրա․ Ատն զի իր որբ տղոցը եկամուտ
մը չի կապեց։

Հար․ Ի՞նչ կըսես․ ես աղէկ գիտեմ որ
թագաւորը հրամման ըրաւ․․․․

Հրա․ Կարելի է․ բայց չեն կատարեր հը-
րամանը։

Հար․ Շատ կը ցաւիմ ատոր վրայ։ Անանկ
է նէ Փառներեան զօրապետը որբեր
ձըգեց․․․ քանի՞ հատ են։

Հրա․ Երկու։

Հար․ Ի՞նչ կընեն հիմա։

Հրա․ Երկնից հօրը ողորմանը կը սպասեն ու

կը յուսամ հօրերնուն քաջութենը
նմանելու․ բայց պինտ առաջ իրենց
Թագաւորին միտքը իմանալու կա-
րօտ են ։

Հար․ Հաւատացէ՛ր ինծի որ պիտի իմանան
Թագաւորին միտքը․ Ես աղէկ կը
գուշակեմ․ Թագաւորը չի մոռնար
անոնց հօրը երախտիքը․ Շատ կը
ցանկամ տեսնել այն տղաքը․

Հրա․ Անանկ է նէ գո՛նէ անոնց համար իմ
տունս հրամմէ․ վասն զի իմ տունս
կը բնակին ։

Հար․ Կեցի՛ր ․ ․ ․ առաջ քանի մը տեղ պի-
տի երթամ․ անկէց ետև կուգամ
քու տունդ ։ Խօսք կուտամ քեզի
որ քու եղբօրդ որբերը չի տեսած՝
չեմ երթար ։ (Թուղթէ պահարան մը
կը հանէ գրպանէն) Թողութիւն ըրէ
բան մըն ալ պիտի հարցնեմ․ այս
քաղաքը մէկ վարժապետ մը կայ
Պուրգէն անունով՝ կը ճանչնա՞ս ։
(Բանալով ու նայելով Թուղթէ պահա-
րանին մէջ ։)

Պահ․ Հրամմէ՛րես ։

Հար․ Շատ կը փափագիմ անոր մարդը տես-
նել վասն զի շատ երևելի գիտուն
ու խելացի մարդ է ։

Վահ․ Երևելի՞ լսիր․ ի՞նչպէս կրնայ ըլ-
լալ․ անիկա խեղճ աղքատ մարդ մըն
է ու չքաւորութեամբ կապրի, ու
հազիւ կը ճանչնան զինքը իր քաղ-
քին մէջ։

Հայր․ Գիտե՛մ ատանկ ըլլալը․ երևելի և
գիտուն մարդիկը ամենևին յարգ-
չեն ունենար իրենց կեանքին ու ի-
րենց քաղքին մէջ։ Բայց ես կու-
զեմ զինքը տեսնել։

Վահ․ Կուզես նէ ես հրամանքդ կը տա-
նիմ իրեն։

Հայր․ Ո՛ւր է ատանկ շնորհք մը ընէիր ին-
ծի․ ու ասանկով՝ ազնուականներու
ժողովքէն՝ աղքատներուն ժողովքը
կերթանք ուրախութեամբ։

---

## ՏԵՍԱՐԱՆ․ Ե․

### ՆԱՒԱՍԱՐԴ ՈՒ ՎԵՐԻՆՆԵՐԸ

Նաւ․ Հիմակ իմ խանութս սուրհանդակ
մը հասաւ որ քեզ կը փնտրէ․
(Ահէկն) ու անանկ արտորնօք ե-
կեր է որ խանութս մտնելուն պէս

մարեցաւ ինկաւ ։

Վահ․ Ի՞նչը ։

Նաւ․ Թուղթ մը ունի քեզի տալու․ ու խելքը վըրան գալուն պէս հօս բերի ։

Վահ․ Թող նե՛րս գայ ։

---

## ՏԵՍԱՐԱՆ․ Զ․

### ՍՈՒՐՀԱՆԴԱԿԸ ՈՒ ՎԵՐԻՆՆԵՐԸ

Սու․ Մէկ մա՛լ տասնկ վազելու յանձս չեմ առներ ։ (Շահէին) Հրամմա՛նքդ եմ պարօն Շահէն ։

Վահ․ Հրամմէ՛րես ։

Սու․ Ա՛ռ աս թուղթը ։

Վահ․ Ո՞ւսկէց բերիր ։

Սու․ Դրեստէն․ յիսուն մղոն տեղը չորս ժամուն մէջ վազելով լմըն-ցուցի․ երկու ձի ճաթեցուցի ։

Վահ․ Ո՞վ խրկեց քեզ ։

Սու․ Շահան Արծրունին ։

Վահ․ Դեռ հիմակ էր անկէց թուղթ մը եկաւ ։

Սու․ Ասիկա խիստ շատ հարկաւոր է ։

Վահ․ (Անկիւնէ մը դահլիճին վարով սուրհան-

դալէն) Ո՛ւր գնամ հոգնութի՛ւն առ ու սպասէ որ պատասխանը գրեմ։

Սու. Ո՛հ. Ա՜ծ արեւըդ պահէ. անիկա (նայելով ատընէն վրայ) հոգնած մար-դոց ամենաբուժ դեղ է։ (կէրթայ)

Հայր. Ա՜ հահան արծրունին։

Պաշ. Համբե՛րէս. քուկին ու իմին բա-րեկամս։ Կ'երեւի որ շատ հարկաւոր գործք պիտի ըլլայ. (Կը բանայ թուղ-թը կը կարդայ.) "Պարօն Սահէ.
,, Սաստիկ զարմանքով կիմացընեմ
,, հրամանոցդ որ երեկվան քեզի
,, յանձնած մարդս աղէկ չի ճանչ-
,, ցայ։ Հիմայ քեզի արտորնօք սուր-
,, հանդակ մը խրկեցի որ զգուշ կենաս
,, անոր հետ տեսնըվելու ատենըդ։
,, Կը հաւատամ անիկա թագա . . .
,, (Խեղճը գլխէն զարկածի պէս ապշահար
,, երապետէն երեսը կը նայէ ապշելով,
,, ու թուղթն ալ ձեռքէն կ'իյնայ։) Ո՛հ։

Հայր. Ի՛նչ եղաւ պարոն. չըլլայ որ ձա-խորդ լուր մը գրած ըլլան քեզի։

Պաշ. Չէ՛ պարօն։ (Նորէն կ'առնէ թուղթը շփոթելով ու դողալով։)

Հրա. Արեսիդ գընը նետեց։

Պաշ. (Կը շարունակէ կարդալը) "Պէտքը
,, չէ որ քեզի իմացընելս ուրիշին

„ զուրցես ։ Չի գիտնալու զարկ ․
„ բայց զգո՛յշ կեցիր հետը վարժելու
„ ատենդ „ ։

Նուաստ բարեկամ քո
Աշհան Արծրունի ։

(Արտաքնայ նայելու հարեւրապետէն ․ ետքը ամբողջը կը նայի ու վախէ ու յայտ- գործէ նշան կը ցուցնէ փախէ կը փայլ ես ես երթալով ։)

Հայր ․ Ի՞նչ կայ բարեկամ ․ ան թուղթը քեզ տակն ու վրայ ըրաւ ։

Վահ ․ (Ո՜ թողելով) Տէ՛ր ․ ․ ․

Հայր ․ (Պարզէսութիւն խօսելով Աշհէն) (Եթէ այն թուղթին մէջ իմ վրայօքըս գրած բան մը կայ , ես կը կընքեմ զանի ինչ որ ըլլանէ ըլլայ հասկըցած գաղտնիքդ ։) (Ատէն խօսնի կը կը հանէ ու Աշհէն բերնէն կը տնէ ։)

Վահ ․ (Տէ՛ր ․ քուկին վրայ ունեցած յարգութենս ՚ի զատ ուրիշ գաղտնիք մը չունիմ քեզի ։)

Հայր ․ (Ի՞նչ կը նշանակեն այս գործքերը ։) (Ինքնիրեն)

Հայր ․ Բաղդս բանեցաւ ճանչնալու արժանաւոր մարդ մը ․ ու մէկըզմէկ պէտք յարգենք ։ Ո՛ւրհ.ք ըրէ

հետս եկոր · ըսած վարժապետիս տունը երթանք ։

Վահ · Շատ մեծ փառք կը համարիմ ին-ծի , քուկին հրամանիդ արժանի ըլլալս ։

Հայր · (Առանձին) Պարո՛ն շնորհակալ եմ քենէ մինա՛կ բարով ։

Հրա · Ողջո՛յն եմ պարոն կաղաչեմ որ զիս չի մոռնաս ։

Հայր · Հաւատա՛մ իմ խօսքիս ու ապահով կեցիր որ շատ կը յարգեմ քու ա-ռաքինութիւններդ ։

Վահ · (Առանձին) Ողջո՛յն եմ պարոն · մինակ բարով · (Երթալու ժամով)

Հրա · (Ահեկէն եարէն վազելով) Շնորհք ըրէ պարոն Աղէ · Նոր բան մը կա՞յ ... այն թուղթը , քու շփո-թութիդ ... Իմ՝ հարիւրապետը սկըսեց շատ մեծնալ իմ աչքիս առ-ջին , ու կը կասկածիմ՝ ... կարելի՞ է որ ...

Վահ · Ես բան մը չիյտեմ ... դու եթէ աչք ունիս , դատէ ու հասկըցիր · բայց եթէ չես հասկընար՝ զգո՛յշ կեցիր ։ (Կերթայ)

Հրա · Ի՞նչէն բան կը վկայէ իմ կասկած-ներս ճշմարտելու · այն վարմունքը ,

դէմքը, վեհափառութիւնը, նամակը,
Ա՛ աչքերին շխոթիւնը... վերջապէս
ամէն բան կը ցուցունէ որ անիկա
թագա... Ա՛րդեօք անպատեհ բան
մը ըրի. արդեօք բերնէս խօսք մը
ելա՞ւ... սիրտս կը դողայ... աս
ի՞նչ վտանգի մէջ է որ ինկայ: Ա՜հ
բաղդ. գո՛նէ դու ինծի օգնէիր
պատուով ու առանց անարգանաց
ձանչնալու զանի... Ո՛չ յանցանք
մը չունիմ ու սիրտս հանգիստ է:

---

## ՏԵՍԱՐԱՆ․ Է․

ԹԱԹՈՒԼ, ԽՈՐԷՆ, ՀԱՄԱԶԱՍՊ, ՄՈՒՇԵՂ․
ՓԱՌՆԱԿ, ԲԱԲԿԷՆ ՈՒ ՀՐԱՀԱՏ

Խոր. Ո՞վ է ան հարիւրապետը:
Թաթ. Առանձին ժողովքը լըմընցա՞ւ:
Հրա. Հրամմեցէ՛ք պա՛րօններ:
Բաբ. (Հրահատին) Պա՛րօն դու շատ յան-
դըգնութիւն ըրիր այսօր:
Հրա. Ա՛ղէ՛կ ըրի. ուրախ եմ:
Բաբ. Ե՛ս ալ տրտում եմ:
Թաթ. Կախորժի՞ն ան հարիւրապետին հետ

տեսնըվելեդ ։

Համ. Պարոն Հրահատը շատ կը սիրէ զինուորները ։

Հրա. Լեզունիդ մեզ քաշեցէք ու նայեցէք որ չի ճանչցած մարդերնուդ դէմ անպատեհ խօսքեր անվայելուչ գործքեր չընէք ։

Թար. Հա՛ հա՛ հա՛ . իրաւունք ունի . Հարիւրապետին թուրովը մեզ կը վախցընէ ։

Հրա. Պարոններ հերիք եղաւ . դուք ձեր խօսքը չէք գիտեր, Եթէ ձեր ըսած խօսքերուն ծանրութիւնը գիտնայիք , ատանկ չէիք խօսէր ։

Խոր. Շնորհակա՛լ եմ այդ խրատեդ ։ (Ծաղր ընելով)

Թար. Նայեցէ՛ք ինչպէս տաքցեր է ։

Հրա. Մնա՛ք բարով ։ ([illegible])

Խոր. Կերթա՞ս ։

Հրա. Կերթամ ։

Թար. Հարիւրապետը գտնելո՞ւ կերթաս ։

Հրա. Այս իմ ուզածս կընեմ ։

Համ. Նայեցէ՛ք . երկու րոպէի չափ զինուորի մը հետ տեսնըվելով ինչպէս հպարտացեր է ։

Խոր. Կը ճանչնա՞ս զանի ։ (Հրահատին)

Հրա. Կարելի է ։ Անանկ մարդ մըն է որ

անշուշտ վերջը պիտի ամըչնայ . . .
(Մըտնեն ու կը խընդան)

Խաչ. Ի՛նչ ըսէ՛։ (Դառնալ ընկերին)

Հրա. Խօսք տըւէք երթամ։

Թաթ. (Մօտէն խընդալով) Ե՛հ շատ ատանկ բարկասիրտ մըլլար։

Հրա. Մեղի աղէկ է պատասխան չի տալ ձեզի։ Հիմակ իրաւունք ունիք. վաղը նայինք ով պիտի խընդայ իմ վրայ։ (Կերթայ)

Խաչ. Անտարակոյս ամմէնս ալ պիտի խընդանք։

Թաթ. Խոնարհեցընենք սա հպարտը ու ունայնամիտը։

Խաչ. (Հանդարտաբէն) Ես ամենուն չեմ ուզեր զինքը տեսնել. դու ինչպէս կը համբերես։

Համ. Ես կը մոռնամ հիմակ զանի բոլորովին. ու շատ զղջացեր եմ բարեկամութի ընելէս անոր հետ։ (Կերթայ)

Թաթ. Մենք մեծամեծ մարդիկ ենք. որովհետև սնկեց հարուստ ենք. սորվեցընենք անոր՝ մեզի հակառակութի ընելը։ (Կերթայ Մաշէղին հետ)

Բաբ. Ո՛հ. ասիկա այնչափ հոգս չէ։ Ես շատ կը մտմտամ իմ տղուս վրայ որ իր աղնուականութիւնը մէկ դի դը-

Նեղով՝ վարժապետի մը փեսայ եղաւ . . . Պէտք է որ ասոր զատեմ անոնք մէկըզմէկէ ու պատմեմ։ (Կեղծեաց փառանջին ու խորէնին հետ։

## ԴԵՐ Զ.

## Բ . ԱՐԱՐՈՒԱԾՈՅՆ։

# ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

Վարդապետեան խուց մը՝ քանի մը հին գիրքեր ու գըրուած թուղթեր աստին անդին ցրուած։

## ՏԵՍԱՐԱՆ·Ա·

ԳՈՒՐԳԷՆ հնոտի լաթեր ու հին գըլխարկ մը հագած, հին աթոռէ մը վրայ նստած, ու նայելով գըրուած թուղթի մը գըրասեղանին վրայ, որուն վրայ կանթեղ մըն ալ կայ։ Ետքը ՎԱՂԱՐՇ կուգայ սկաւառակ մը ու շիշէ մը ջուր ձեռքը։

Գու. (Ոտքի կելլէ, գրած թուղթն ալ ձեռքը՝ ճրագը կառնէ կընայէ գրածը ու աղէկ մը քննելէն ետք) *Ի՛մ գրուածս ուզածիս պէս յաջողեցաւ։* (Տեղը կը դնէ թուղթը, մէկ ուրիշը ձեռքը կառնէ) *Ա՜ս ալ աղէկ գրեր ըլլայ . . . բայց*

եթէ ամմէնն ալ լմընցընեմ՝ ինչ
շահ պիտի ըլլայ ինծի . որը պիտի
գովէ , որն ալ պիտի քամահրէ . ու
ինծի միայն գովեստի կամ նախա-
տանաց ժառանգութիւնը կը մնայ .
(Տեսնենք Աշխարհը որ կ'երթայ .)
Ապրի՛ս . հոս դիր այդ սկաւառակն
ու շիշէն . ասիկա պիտի ըլլայ իմ
իրիկվան հացս ։

Վաղ. Աս իրիկուն հոն պիտի ուտես հացդ ։

Գու. Ես ասկէց տեղ մը չեմ երթար մին-
չև որ չի սրբագրեմ իմ գրածներս ։
Դու գիտես ինչ վախճանի համար
աշխատեցայ այս դժուարին գործին
վրայ ։ Եթէ ուզած ատիթս անցնի՝
կորսընցուցած կըլլամ ժամանակս
ալ աշխատութիւնս ալ ։

Վաղ. Ա՛հ սիրելի հայրս եթէ քիչ մը հա-
րուստ ըլլայինք . . .

Գու. Մի՛ յուսահատիր տղաս . եթէ խղճ-
մըտանքնիս մեզ չի տանջեր , մենք
խիստ հարուստ կը սեպվինք . ուրի-
շին ձախորդութեանը նայելով՝ կըթե-
թևնայ մեր խղճութիւնը ։ Ինչո՞ւ
պէտք է որ հարուստնամ՝ բաւա-
կան է որ գոհ և երջանիկ ըլլամ ։
Աղվոր լաթեր հագնող մարդը , մի

*Թէ առաւել յաղթելի՞ է. քան ըզ-
բոպիկն ու մերկը․ չէ՛ չէ՛․ բայց հա-
րուստը կըրնայ իր կիրքերը պաշտեր ,
ամէն կերպով զուարճանար․ ահա
աս է իր ունեցած մեծութիւնը որ
աղքատին վրայ ունի․ իսկ երբոր
չունենայ հարստութի , միշտ հաւա-
սար է իր բարքը աղքատին բարքին
հետ․ ասոր ապացոյց՝ հարստացուր
մէկ աղքատ մը , որուն վարքը ու
բարքը պարզ և մաքուր կընկարեն
քեզի , շատ չի քըշեր ան ալ կը փոխ-
վի մեկալներուն պէս ։ Աս միայն մէկ
տեսակ մը մարդոց խելացի կը համա-
րիմ․ այսինքն անոնք որ ամէն վի-
ճակի մէջ ամէնուն չեն փոխեր բար-
քերնին ։*

---

## ՏԵՍԱՐԱՆ․ Բ․

ԱՐՏԱՒԱԶ , ԳՈՒՐԳԷՆ , ՎԱՂԱՐՇ ՈՒ ԵՏՔԸ ՀԱՐԻՒՐԱՊԵՏԸ.

Արտ․ *Պարոն Գուրգէն պարոն Գուր-
գէն ,*

Գուր․ *Ինչ կայ ։*

Արշ. Պարոն Սահէն դուռը զարկաւ ու իր հետը հարիւրապետ մը կայ որ կը ցանկայ քեզ տեսնել ։

Գուր. Ըսէ՛ որ հրամմէ

Արշ. (Կերթայ ու ետքը կուգայ ։)

Գուր. Ա՜ս ատեն ինչ կուզէ ինէ հարիւրապետ մը ։

Հար. (Սպասաւորին ետևէն գալով) Գուրգէն վարժապետը հրամա́նքդ ես ։

Գուր. (Գուրգէն աթոռէն կելլէ ու խոնարհութիւն կընէ) Հրամմե՛րես տէր ․ հրամանոցդ ծառայելու պատրաստ եմ ։

(Սպասաւորին) Ո՞ւր է պարոն Սահէն ։

Հար. Հիմա ան ալ կուգայ ։ Ներողութիւն ըրէ ուշ ատեն գալուս ․ բայց ուրիշ ժամանակ չունիմ․ վասն զի վաղը ճամբա պիտի ելլեմ ․ ու չեմ ուզեր երթալ առանց հետդ տեսնըւելու ։

Գուր. Շնորհակա՛լ եմ քու մարդասիրութենդ ․ ինչ բանի կըրնամ ծառայել հրամանոցդ ․ ինչ կուզես որ ընեմ ։

Հար. Կուցէ՛ խիստ շատ ։

Արշ. (Հարիւրապե՛տ մը ․ ո՜հ որչափ կըսիրեմ աս իրենց հագուստը ։) (Կերթայ)

Գուր. Պարոն ․ կուզես անդին խուցը երթանք որ անկէց աւելի մաքուր ըլ-

լալով՝ հանգիստ կըլլաս։

Հայր. Ո՛չ չէ. անկէց աւելի յարմար տեղ ո՞ւր պիտի գտնենք որ քու փառա-ցըդ ու իմաստութեանդ վկայ է։

Գու. Դու զիս կամչցընես. ես մէկ խեղճ վարժապետ մըն եմ որ ուրիշ բան մը չունիմ, բայց միայն աղքատ ու հայ-րենեաց օգտակար ընելու փափագը։ Կը ցաւիմ որ փառաւոր նստարան չունիմ որ հրամանքդ նստիս...

Հայր. Հոգ չէ. աս հին աթոռներէն աւելի փառաւոր նստարան չի կրնար ըլ-լալ որոնց վրայ քեզի պէս իմաստուն մարդ մը նստեր է. (Կընստի հին աթո-ռի մը վրայ) Ես հոս խիստ հանգիստ եմ. հրամանքդ ալ նստէ որ խօսակ-ցինք բարեկամաբար. բայց կը վախ-նամ որ ձանձրութիւն կուտամ քեզի։

Գու. Մանաւանդ պատիւ կը սեպեմ ինծի։

Հայր. Ինչպէս ես։

Գու. Ինչպէս որ են մեր տանը վարժա-պետները։

Հայր. Ի՞նչ ըսել կուզես։

Գու. Աղքատ և ուրախ։

Հայր. Դուն աղքա՞տ ես։

Գու. Ի՞նչ կը զարմանաս ասոր վրայ. չես գի-տեր որ քանի մը հարիւր տարի է

վարժապետութիւն ու աղքատութիւնը հարազատ եղբայր եղած են՝ մէկըզմէկու հետ։

Հայր. Իրաւ է ըսածդ. բայց գիտուն վարժապետները պէտքը չէ որ աղքատ ըլլան։

Գաւ. Քեզի ով ըսաւ որ ես գիտուն եմ։

Հայր. Քու շինած գիրքերդ։

Գաւ. Ո՞ւր ես տեսեր։

Հայր. Վեննա՝ Թագաւորին գրքատանը մէջ։

Գաւ. Այո՛ իրաւ ես. շատոնց է որ Թագաւորին վրայ գիրք մը շինեցի ու իրեն ընծայեցի։

Հայր. Ամմէնն ալ կը զարմանան այն գիրքին վրայ ու Թագաւորն ալ շատ հաւներ է։

Գաւ. Ներողութիւն ըրէ, քու խօսքդ սխալ կերևի։

Հայր. Ինչէ՞ն։

Գաւ. Եթէ Թագաւորը հաւնած ըլլար՝ ինծի անանկ քիչ բան չէր ըներ։

Հայր. Ես աղէկ գիտեմ որ Թագաւորը հազար ոսկի խրկեց քեզի։

Գաւ. Ի՛նչպէս դիւրաւ կը հաւատաս ատանկ բաներուն։ Հազարին ինը հարիւր յիսունը հանէ՝ ան ատենը խօսքդ շիտակ կըլլայ։

Հայր · Ես չեմ կարծեր որ թագաւորը ատանկ քիչ բան տայ քեզի ։

Գու · Կարելի է որ թագաւորը հազար ոսկի տըված ըլլայ · բայց իր պաշտօնատարները գանձատունը չի պարպելու համար ինը հարիւր յիսունը վար դըրած են ու միայն յիսունը ինծի խրկեր են ։

Հայր · Ինչպէս · շատ հետաքրքիր եմ ատիկա գիտնալու ։

Գու · Ահ՝ մէկ դի թողունք այդ խօսքերը և ուրախական խօսքեր զուրցենք ։ Շնորհք ըրէ պարոն ով ըսաւ քեզի որ գաս իմ հետս տեսնըվիս ։

Հայր · Քուկին իմաստութեանդ վըրայ ունեցած յարգս ։

Գու · Ասիկա գուցէ առաջին անգամն է որ անկեղծ գովեստ մը կը լսեմ իմ երեսիս · բայց ատով ալ չեմ հըպարտանար ։

Հայր · Հիմա գիրք կը շինե՞ս ։

Գու · Գրեթէ չէ՛ պարոն · վասն զի հիմակ կարդալու սէրը վերցաւ · վարժապետ կամ գիտուն ըսելը իբր թէ մէկ անարգ ու անպիտան մարդ մը կը համարվի ։ Պիտանի գիրքերը գըրքատուններուն մէջ փոշիով գոցված

են. կարդալու սէր ունեցողը՝ ունայնամիտ ու անխելք կը համարուի. ազգի ու հայրենեաց համար սատակ ծախող խիստ քիչ մնացին. Ափսոս այն խելացի տղոցը ուսումնասիրութեանը վրայ որ սատակ չունին բան սորվելու մանաւանդ կրթուելու, որոնք կընան ազգին ու հայրենեաց փառք և լուսաւորութիւն ըլլալ. Կրթութիւնը աղւոր ծաղիկ մըն է զանազան գոյներով զարդարուած. բայց տղայութեան դաշտին մէջ միայն կը բուսնի.

Հայր. Կարծեմ որ այդչափ խրատունք պիտի չունենաս զուրցելու.

Գ.ու. Կարծեմ որ շատ խրատունք ունիմ. վասն զի միայն վարժապետութիւն՝ հիւանդանոցը պիտի գտնուէի հիմա, եթէ քիչ մը ալ չունենայի հօրմէս մնացած.

Հայր. Անանկ է նէ վարժապետութենէն ձանձրացած պիտի ըլլաս.

Գ.ու. Ա՛չ չընէ. ասիկա իմ հօրս ու պապերուս արուեստն է ու իբրև առաքինութիւն ժառանգութիւն կը համարիմ զինծի ու սիրով կընեմ. մարդ կրթելէն աղէկ ի՞նչ մեծ բան կայ. արդեօք աւելի մեծ ուրախութիւն

կըրնա՞մ ըլլալ աշխարհիս մէջ, երբոր մէկը իր կրթած ու վարժած աշկերտին գիտութիւնը ու քաղաքավարութիւն վարվիլը տեսնէ ։

Հայր. Դու պէտք է որ քեզի կըռնակ ունենաս հարուստ մարդիկներ որ օգնեն քեզի օգտակար գիրքեր շինելու և տղոց իմաստութիւն սորվեցընելու ։

Գու. (Կը խնդայ)

Հայր. Կը խնդա՞ս ։

Գու. Ինչպէս չի խնդամ. ասոնք սովորական խօսքեր են որ կըսվին վարժապետներուն. ու ամենևին օգնութիւն չեն ըներ ։ Բայց ինծի ամենևին հոգս չէ. մէկ մարդ մը որ բարոյական օրէնքը աղէկ պահէ, իր կեանքը առաքինութեամբ անցընէ, անանկ մարդուն խղճմտանքը որչափ մաքուր ըլլայ, նոյնչափ ալ սիրտը հանգիստ կըլլայ ։ Իր օրերուն մէջ ամմէնէն աղէկը ան օրը պիտի սեպէ, որ օր որ հասարակաց կամ բարեկամներուն օգուտ է ըրեր ։ Ասով միշտ ձեռքէս եկածին չափ կը ջանամ ընել այս օգուտը որպէս զի խղճմտանքս մաքուր ըլլայ ու սիրտս ալ հանգիստ ։

անոր համար՝ կը խընդամ երբոր իմ երեսիս առանց անհիմն գովեստներ կուտան ։

Հայր. Իրաւունք ունիս ։ Հիմա ինչ բան կը գրես . կարելի՞ է որ տեսնեմ ։

Գուր. Խիստ աղէկ . ասդին հրամէ ու քու կարծիքդ ալ ըսէ . ասիկա փիլիսոփայութեան վրայ գիրք մըն է ։

Հայր. Աղէկ կը նմանի բայց չեմ հասկընար ։

Գուր. Եթէ բաղդս բանէր թագաւորին ցուցունելու . . .

Հայր. Եւ թագաւորը տեսնէ նէ ինչ պիտի ընէ ։

Գուր. Սիրտ կառնէի . կը զուրցէի իրեն թէ հիմակվան գիտուններուն ու ազգին կացութեանը վրայ գութ ունենայ ։

Հայր. Դու գիտունիդ ո՞ւսկէց սորվեցար ։

Գուր. Աղբօրմէս, որ շատ գիտուն մարդ է ։

Հայր. Հիմակ ո՞ւր է ։

Գուր. Հոս է . բայց աչվըները չի տեսներ . հիւանդոտ է , ու հիմակ իր առջի եղածին ստուերն է ։

Հայր. Շատ կը ցանկամ տեսնել զանի ։

Գուր. Խիստ աղէկ . լաւ գիտեմ որ շատ պիտի զուարճանաս երբոր հետը տեսնըվիս ։

Հայր. Եւ գանք մեր խօսքին . այդ քու

շինած գիրքդ շատ մեծ անուն պիտի վաստըկցընէ քեզի. երանի թէ ամմէն գիտուն այդպէս բաներ գըրէին ու տպագրիչներն ալ յօժարութեամբ տպէին.

Գոռ. Հիմըկու ատեններս Պղնձէ քաղաքն ու Արապահանը բոլոր իրենց ոչնչութիւնը աւելի յարգ ունին քան փիլիսոփայական գիրքերը. Իմաստակներն ալ եթէ ուրիշ պիտանի գրոց մէջ գեղեցկութիւն մը տեսնեն, աչվընին գոց կանցնին վրայէն. բայց մանր մունր պակասութիւներ Արգոսի աչքով կընային ու ճարտարութեամբ կը մեծցընեն զանոնք.

Հայր. Աղբիս պէյ էֆէնտի շիտակ խօսեցար.

Գոռ. (Սրտմտանայ ու չար բարկութեամբ կընայէ) Ո՞ւր է.

Հայր. Ո՞վ.

Գոռ. Պէյ էֆէնտին.

Հայր. (Սրտառուչ ու Պարզէնին կանակը ծածկելով) Ո՛վ գիտէ. թերևս պէյ ալ կըլլայ.

## ՏԵՍԱՐԱՆ Գ.

### ՍՄԲԱՏ, ՈՒ ՎԵՐԻՆՆԵՐԸ

Սմբ. (Խոնարհութիւն ընելով ներս կը մտնէ.) Ո՛հ. ալ չեմ կրնար դիմանար հօրս անգթութեանը. ասոր զիս պիտի զատէ իմ կնոջմէս։

Հայր. (Կուրկէնէն) Ո՞վ է այս տրտում երիտասարդը։

Գա. Ո՛հ. եթէ գիտնայիր ամմէն բան . . . ասիկա է մէկ հատիկ ժայռը որուն վրայ կը խորտակի իմ հանգստութիւս ու չեմ գիտեր ինչպէս յաղթեմ. ասիկա իմ փեսաս է։

Հայր. Ի՜յ ինչ վիշտ կը բերէ քեզի . . . (Սմբատին դառնալով) Ո՞ւր մտածեր բարեկամ. աստուած ողորմած է։

Սմբ. Ո՛հ. հրամանքդ հո՞ս ես պարօն։ (Հայրն բարեւելէն)

Հայր. Կարծեմ որ քիչ մը առաջ քեզ տեսայ։ Ինչու կերպարանքդ փոխեր ես։

Սմբ. Տէ՛ր աս հագուստովս հոս կուգամ որ մարդ չի ճանչնայ ու հօրս չիմացընեն. վասն զի ինքը մէկ սուտ ազնուականութիւն մը պարծելով կուզէ

զիս պատժել աղքատի փեսայ ըլլալուս համար։

Հայր. Կարծեմ որ տոր վրայօք ինծի խօսեցար. բայց պէտք էր քու հօրդ հրամանին հնազանդէիր ամենէն կերպով. վս՟ զի մէկ հայր մը որչափ գէշ ըլլայ, զաւակը իշխանութիւն չունի անոր բան մը ըսելու։

Ս՚է. Տէ՛ր. ես ամենէնէն օգնութիւն կը խնդրեմ. հայրս անգթութ՟ե կը հրամայէ ինծի որ զատվիմ կնոջմէս։

Հայր. (Շիտակը ըսեմ, շատ կը խըշխըշայ սիրտս) Ինծի անհնար կերեւայ որ ատանկ բաներ պատահի աս թագաւորին օրովը։

Գ՟ու. Ա՛հ պարոն, ո՛վ որ շատ ստակ ունի, անիկա շատ իրաւունք ունի։

Հայր. Բայց միշտ ատանկ չէ։ (Ս՚է․․․էն) Ո՞վ է քու հայրդ։

Ս՚է. Պարոն Բաքէնն է։

Հայր. Կենցաղակից ընկերութե՟ մեծաւո՞րը։

Ս՚է. Հրամմերես։

Հայր. Ճանկըցայ. էյ ինչո՞ւ ատանկ քեզի թշնամի է եղեր։ Աս գրաւ կը դընեմ որ դու շատ չի քըշեր պէյ պէտի ըլլաս ու շատ համբուստանաս։

Ս՚է. Ինչո՞ւ։

Հայր․ Քու արժանաւորութեամբդ։
Մայր․ Եթէ էշը թըռի, ես ալ պէյ կըլլամ կը հարուստանամ։
Գ.ու․ Ա՛հ, կաղաչեմ այդ պարապ խօսքերը մէկ դի դրէք։
Հայր․ Խիստ աղէկ։ (Մէրապէն) Հա՛ աղէկ միտքս եկաւ․ դու ինծի ըսիր որ թագաւորին ոտքը պիտի իյնաս։ Ի՞նչ պիտի ուզես անկէց։
Մայր․ Գթութիւն ու արդարութիւն։
Հայր․ Այդ դիւրին բան է։
Գ.ու․ Դու ամմէն բան կը դիւրացընես, բայց ինծի ամմէնն ալ դժուար կերևնան։

---

## ՏԵՍԱՐԱՆ․ Դ։

### ԱՐՏԱՒԱԶԴ ՈՒ ՎՆՐԻՆՆԵՐԸ

Արտ․ Ո՛հ․ պարոններ նայեցէք ինչ ուրախութի՜ կայ փողոցը․ պատուհանը ելէք, ու ամմէնն ալ կը տեսնէք։
Գ.ու․ Ի՞նչ կայ։
Արտ․ Ո՛րը կը վազէ, ո՛րը կը դառնայ, որն ալ կը հայցընէ ․ ․ ․ ազնուականները

իրար են անցեր . . . եկեր է եկեր է։

Գառ. Ո՛վ։

Արք. Խնադաւորը։

Մ՛ք. Ո՛հ օրհնեալ անուն. երանի թէ իր գալը մեր վիշտերը վերջացընէր։

Գառ. Ահիկա աղէկ առիթ մը կըլլար. . .

---

## ՏԵՍԱՐԱՆ Ե.

### ՎԱՀԷ ՈՒ ՎԵՐԻՆՆԵՐԸ

Վահ. (Հազարապետին) Պարոն երէցը ուզես երթալ՝ ձիերը պատրաստ են։

Հազ. Շնորհակալ եմ։

Գառ. Պարոն Վահէ իրա՞ւ է թագաւորին գալը։

Վահ. Անանկ կըսեն։

Հազ. Ա՛յ դու ինչ կըսես պարոն Վահէ։

Վահ. Դու իմ երեսէս կըրնաս հասկընալ իմ պատասխանս. (հոս զգուշութիւն պէտք է.)

Մ՛ք. (Վահէին) Ո՞ւր իջաւ թագաւորը։

Վահ. Ամէնն ալ սուրհանդակաց իջևանը կըվազեն։

Մ՛ք. Ի՞նչպէս ըսեմ որ երթամ տաքն

կենամ։

Վահ. Ո՛վ պարօնին պատուինէ։ (Ցուցնե-լով Հայրապետը)

Հայր. Ես ձեռքէս եկածը կընեմ․ ու խօսք կուտամ որ կը յաջողի։

Գոհ. (Հայրապետէն) Ո՛հ քեզ օրհնէ։ (Արտաւազդին) Գնա՛ Արտաւազ շու-տով գինի բեր մեզի։

Արտ. (Կերթայ ու ետեւը կուգայ։)

Հայր. Գինին ինչ պիտի ընես։

Գոհ. Թագաւորին կենացը համար խը-մենք։ Թողութի՛ ըրէ հրամանքդ ու մեզի հետ կը խմես։

Հայր. Շատ աղէկ․ ես ալ կը միաբանիմ ձեր բարեսրտութեանը հետ։

Արտ. (Շիշերով ու գաւաթներով կուգայ.) Դուք ինչ կընէք ըրէք․ ես երթամ պիտի թագաւորը տեսնեմ։ (Կը դնէ գրասեղանին վրայ կերթայ։)

Գոհ. (Կելնէ կը կեցնէ ու կ'ըսայ) Ա՛ռաջ օտարականին . . . Ետքը պարօն Ա՛հէին . . . ու աս ալ ինծի . . . դուք ալ եղուցէք խմեցէք։ (Խըմե-լով) Կեցցէ՛ մեր բարերար թա-գաւորը։

Վահ. (Իրեն հետ անոնք ալ) Կեցցէ՛։

Գոհ. (Մօտենալով Հայրապետին ական-

ջին) Շ՛նորհք ըրէ պա՛րոն . . . դու խրատուցընէ՛ ո՛վ ես ։

Հարց . Շ՛իտակը ըսեմ քեզի . Թագաւորին բարեկամներուն մէկն եմ ։

Գու . Թագաւորին բարեկամը . խիստ աղէկ . (Խըռըրըվ) Կեցցէ՛ Թագաւորին բարեկամը ։

Հարց . Շ՛նորհակալ եմ ։

Գու . (Մ՛էրէ ըրածին պէս Խըռըրըվ) Խրատցընէ բարեկամն ես ։

Հարց . Հրամմէ՛րես . մտերիմ բարեկամն եմ ։ (Կլուդայ կուզութը ։) Ա՛ս գինին խիստ աղնիւ է ։

Գու . Պատուաթ մա՛նլ տա՞մ ։

Հարց . Հերի՛ք է ։

Գու . Կաղաչեմ Թագաւորին հասկըցընես մեր փորձանքը ։

Հարց . Դուք հանգիստ կեցէք ամմէն բան տեղը կերթայ ։

Գու . Ի՛նչ բարեսիրտ մարդ է . աստուած խըրկեց մեզի ։

Հարց . Պարոն Մ՛ահէ . բարեկամութեան գործդ ըմբընցուր . ես ասկեց երկու ժամէն ետև ձամբա պիտի ելլեմ ։

Պահ . Աս հրամմանոցդ ուղածը պատրաստեր եմ ։ (Կերթայ)

Գու . Երկու ժամէն պիտի երթա՞ս . ի՞նչ

շուտ . . .

Հայր. Մի՛ հոգար. երկու ժամու մէջ շատ բան կը տեսնանք . . . Նայու ամու- ինծի տըված խօսքդ կատարէ։

Գու. Ի՞նչ։

Հայր. Օ՛չ ես եղբօրդ պիտի տանէիր։

Գու. Հա՛. խրատուունք ունիս. երթանք։

Հայր. Երթանք պէյ էֆէնտի։

Գու. Հիմակ պէյին ալ կը . . . ըսել պիտի տաս ինծի։ Օ՛չ ես աւելի ծաղր պիտի ընե՞մ։

Հայր. (Ինքնիրեն) Երթանք երթանք։ (Կ'երթայ)

Գու. (Առնէ ճրագը) Կեցի՛ր առջեւէդ երթամ։ Խաղաղութիւն գալը, քուկին հոս գալըդ գիս անանկ ուրախացուցին որ մորթիս մէջը չեմ կրնար սըղմիր։ Ո՜հ (Ճեմէն) մի՛ վախնար. սիրտ առ. միւս ծրագն ալ դու առ որ լոյս ընենք մեր պաշտպանին։ (Մեկնին ալ կ'երթան։)

ՎԵՐՋ.

Գ. ԱՐԱՐՈՒԽԱԾՈՅՆ։

# ԱՐԱՐՈՒԱԾ ՉՈՐՐՈՐԴ

Գրասեղանով ու աթոռներով խուց մը։

## ՏԵՍԱՐԱՆ Ա.

ԽՈՍՐՈՎ գրասեղանի մը առջև նստած, որուն վրայ [illegible] [illegible] մը, շիշէ մը ջուր ու ճրագ մը կայ։ Հին լաթեր ու հին ոտքամաններ հագած։ ԽՈՍՐՈՎԻՆ [illegible] ջուր խըմելու [illegible] պէտք ըլլայ. ու խըմելէն ետև [illegible] [illegible] [illegible] մը ու գլուխը [illegible]։

Խոս. Իմ աղքատիկ կերակուրս լմնցաւ... (Գրիչը վեր առնելով) Փա՛ռք Այ այսօր ալ սրտի խաղաղութեամբ անցուցի։ Հիմա ժամանակ է որ խղճմտանքս ու ես՝ մտերիմ բարեկամ ենք մէկ-ըզմէկու հետ. ([illegible]) [illegible], եր [illegible] [illegible] [illegible] [illegible]

ու նորէն կընայի ·) Ո՞ւր իրիկուն զիս մինակ թողուցին ։ (Ձեռքը երբեմն ծէջ գրպանը երբեմն ալ մէջ գրպանը կը խօթէ ու փնտռտածը չի գտնալ՝ գը-րասեղանին վրայ կը փնտռէ ու յետ-քը ճրագին կը շարնէ ու կը յէկէ ։)

---

## ՏԵՍԱՐԱՆ · Բ ։

ԱՐՏԱՒԱԶ ՈՒ ՎԵՐԻՆՆԵՐԸ.

Արտ · Ի՞նչ ըրիր ։

Խաս · Զեմ գիտեր · ձեռքս բանի մը դպաւ ու բան մը կոտրեցաւ ։

Արտ · Ճրագը ինկեր է ։

Խաս · Ի՛հ · այդ զէն չունի · դիպուածը մէնէ աւելի խելացի փրթաւ ։

Արտ · Ի՞նչէն ։

Խաս · Գու ինծի ճրագ կը թողուս · ասի-կա անօգուտ բարերարութիւն մը չէ՞ ինծի պէս կոյրի մը ։

Արտ · Գիտեմ այդպէս ըլլալը · բայց ինծի և ուրիշներուն համար վառեցի ։

Խաս · Իրաւունք ունիս · · · (շարունակելով փընտռտելու գրասեղանին վրայ) Հոս

պիտի ըլլայ ։

Արտ. Ի՞նչ կուզես ։

Խոս. Իմ թախտախտի տուփը ։

Արտ. Երթամ ուրիշ ճրագ մը բերեմ ։ (Կերթայ ու ետքը կուգայ ։)

Խոս. Ա՛հ ։ ինչ վնասակի եմ հասեր ։ Ա՛հ մարդկային գոռոզութիւն դու որ յաջողութեան վնասակին մէջ գլուխդ երկինքը կը բարձրացնես, նայէ քուկին տկարութիւնդ ։ Եթէ բնութիւնը իր մէկ պարգեւը միայն քենէ վերցընէ, քեզ ամենուն ոտքին տակը կը ձգէ ու ամենէն բանի կարօտ կընէ ։

Արտ. (Դարձեալ կուգայ) Ո՞ւր դըրիր տուփդ ։

Խոս. Հոս դըրի ։

Արտ. Հոս բան չի կայ ։ Կեցիր նայիմ ։ (Կերթայ աս դին ան դին կը փնտռէ) Ո՛հ հոս աթոռին վրայ ես դըրեր ։

Խոս. Ա՛հ աչքս կորսնցուցի ։ ու կը նայիմ որ միտքս ալ պիտի կորսնցունեմ ։

Արտ. Ա՛ռ ։ (Կուտայ տուփը Խոսրովին ։)

Խոս. Ա՛լ երթուր սենեակդ աղջիկս ։

Արտ. (Կը վերցնէ աշտանակն ու կ'ելլէ ։)

Խոս. (Թղթատուփը կը բանայ) Ա՛յն տետրականը դեռ անդիի խորշն է ։

Արտ. Հրամմե՛րես ։

Խաս. Ի՞նչ կուզէ։

Արփ. Կարծեմ որ մեզի պիտի բարերարութիւն ընէ։

Խաս. Ա՜հ, աղա՛ս. ընկերին բարերարութիւն ընող մարդ խիստ քիչ կայ հիմա։

Արփ. Բայց ասոր երեւոյթը աղէկ կընմանի. ու բան չունենայինէ՝ մինչեւ առտու բերանս բաց մնիկ կընէի։ Ասիկա ուրիշ պարօններուն չի նմանիր, ու ես ալ քիչ մը մարդ կը ճանչնամ.... Եթէ լաւ խօսքերը լսէիր... բայց ես խօսքերուն այնչափ չեմ նայիր, մանաւանդ խօսելու կերպին ու դէմքին կը նայիմ։ Պատմեմ քեզի լաւները...

Խաս. Գնա՛ Սրաուսաղ պատկառանքները տար ու եարը պատմէ։

Արփ. Իրաւունք ունիս. վասն զի ահա հոս մարդ կուգայ։ (Կառնէ սկուտեղները ու կերթայ։)

# ՏԵՍԱՐԱՆ. Գ.

## ԳՈՒՐԳԷՆ, ՀԱՐՈՒՐԱՊԵՏ, ՍՄԲԱՏ, ՎԱՂԱՐՇ ԵՒ ԽՈՍՐՈՎ

*Գուր*. Բարի երեկոյ ե՛ղբայր։

*Խոս*. Աստուծոյ բարին։ Գրութիդ լը-մընցուցի՞ր։

*Գուր*. Դեռ չի լըմընցաւ. մարդ եկաւ մի-ջահատեց. բայց շատ շնորհակալ եմ անկէց. ուրախացիր ե՛ղբայր, վեր-ջապէս մէկ պաշտպան մը գտայ մեզի։

*Խոս*. Ամէն մարդու խօսքի մի՛ հաւա-տար. ես անանկ մարդիկ շատ եմ տե-սեր բայց վերջը ամէն խօսքերնին պարապ է ելեր։

*Հար*. Ո՛վ բարի ծեր. դու ինծի անանկ քար մը կը նետես որ կարծեմ թէ արժանի չեմ։ Բայց կաղաչեմ որ զիս ճանչնաս։

*Գուր*. Ո՛հ եղբայր. կըրնամ ըսեր որ աս հեղու իրաւցնէ կուրօրէն խօսեցար։

*Խոս*. Անանկ է նէ հոս է ան մարդը ու-դուն ինծի չիմացուցիր։ Ո՛վ ես նէ դուն պա՛րօն թողութի կը խնդրեմ քեզի ծանր խօսքեր զուրցելուս հա-

մօր ։ Կարելի է որ խաբված ըլլամ ։

Գաս. — Իրաւ անանկ է . եթէ դու կարենայիր տեսնել, անանկ մէկ դէմք մը ունի որ մօրդ չի խաբվիր իրմէն ։

Խոս. — Ի՞նչպէս մօրդ է ։

Գաս. — Պաշտօնատար զինուոր ։

Խոս. — Օ՜ զինուո՛ր . ձեռքդ տո՛ւր ինծի պարօն ։

Հայր. — ( Խօսակցին երեսը շօշափելով ) Հա՛ ։

Խոս. — Զինուորութի՛ւն կը խնդրեմ, կը յարգեմ դրեղ պարօն ու ինծի պաշտպան կընդունիմ ։

Հայր. — Կերեւայ որ հրամանքդ զինուորներու բարեկամ ես ու շատ կը սիրես ։

Խոս. — Այո՛ . հիմակ միայն անոնք յարգելի մարդիկ են ։ Ասան զի միայն զինուորը, ո՛չ պարօն , աւանդապահ է ճշմարիտ պատուոյ ։ Անոնք միայն կը պահեն մէջերնին բարեկարգութիւն և կայր հնազանդութի՛ իրենց մեծերուն ։

Հայր. — Դու անանկ բաներ կը խօսիս որ իմ կարծածէս աւելի մեծ մարդ կերեւնաս ինծի ։

Գաս. — Հէ՛ . եթէ քիչ մը՛ս մօտիկ ըներ' երկրորդ Նաբօլէօն կըսես ։

Հայր. Ասիկա ինծի շատ ծեր կերեւայ։

Գոռ. Այսու ամիս ինէ երկու տարու միայն մեծ է տարիքով։ Պախտե՞ն արդեօք ո՞րչափ միտք է հոգնեցուցեր ու ո՞րչափ աշխատեր է գրականութեան մէջ։

Խօս. Այս ծերմըկած մազերս ու տհաս ծերութ̃իս, մշտախոհ մարդու վարձքըն է։ Իմ հայրս շատ կը ցանկար զիս իմաստուն ընելու, ու զիս զանազան վարպետներու քով դրաւ։ Շատ բան սորվեցայ. եւ ալ աշխարհիս կարդացողներուն մէջ փայլեցայ. բայց կը խոստովանիմ որ ամենեւին բան մը չիտեմ։

Հայր. Քանի՞ ժամանակ է որ աչվըներդ չեն տեսներ։

Խօս. Երեք տարի է։

Հայր. Ինչպէս կը համբերես քու խըղճութեանդ։

Խօս. Խիստ խաղաղ սրտով. վ̃զի, փա՛ռք ա̃յ, պղտիկութ̃ե ատենս անանկ քաջ վարպետներու ձեռք ինկայ որ աղէկ կրթեցին իմ բարքս, ու ամէն բանէն աւելի սորվեցուցին ինծի թէ մարդուս կեանքը փորձանքներու անիւ մըն է։ Ա՛հ, երանի՜ թէ հիմը-

կու տղաքն ալ անանկ կըթըվէին · վո՛ զի կըթըված մարդը ամմէն թըշուառութիւնը կարհամարհէ ։

Հայր · Կերևայ որ կախորժիս քու կուրութենէդ ։

Խոս · Պըրէթէ անանկ է · ինչու որ եթէ զըկըվէր եմ ընութեն լուսաւոր տեսարանը վայելելու , գոնէ չեմ ալ տեսնէր աշխարհիս անկարգութիւնները մոլութիւնները ու յանցանքները · վո՛ զի անանկ թշուառ ատենի մը մէջ ենք որ մարդուս բարքը խիստ աւրըված է ։

Գու · Լսեցի՞ր պատասխանը ։ (Հայրերապէտն)

Հայր · Դու հարկաւ մեծ մարդ ես ։ (Խոսրովին)

Գու · Դ՛հ , ես իմ եղբայրս թագաւորին ունեցած բոլոր ոսկիին չեմ փոխեր ։

Հայր · Բանի որ կընայիմ՝ միտքս կու գայ որ քեզ պիտի ճանչնամ · քեզ տեղ մը տեսած եմ։

Խոս · Խիստ կարելի է ։ Ա՛ իննա գըտնըվէ՞ր ես ։

Հայր · Իմ հայրենիքս է ։

Խոս · Անանկ է նէ զիս հոն տեսած ես , ուր տեղ տասնվերկու տարի կեցայ պատուով ։ Թագաւորական դպրա-

տան մէջ փիլիսոփայութեան վար-
ժապետ էի։

Հայր. Հա՛ հա՛. միտքս եկաւ։ Քանի՞ տա-
րի է որ անկէց ելեր ես։

Խոս. Երեք տարի է։ Ու իմ կուրութիւնս
պատճառ եղաւ որ ելայ անկէց։

Հայր. Դու հարկէ թագաւորը շատ եկամուտ
կապեց քեզի։

Խոս. Խի՛ստ քիչ։

Հայր. Ի՞նչ կըսես։

Խոս. Այ՛ն. Նախանձոտները պակաս չեն
ըլլար աշխարհիս վրայէն որոնք թըշ-
նամի են իրենց ընկերին և պարծանք
կը համարին իրենց մեծերին առատա-
ձեռնութեանը դէմ դնել։

Հայր. Ես երդում կընեմ քեզի որ թա-
գաւորը անոնք չիտէ։

Խոս. Կը հաւատամ... բայց դու իմ վի-
ճակիս աղքատութեանը վկայ ես։

Հայր. Սիրտ առ բարեկամ մխիթարուէ. շատ
չի քըշեր հարուստնաս պիտի ու շատ
պատուաւոր մարդ պիտի ըլլաս։

Խոս. Ինչէ՞ն գիտես։

Հայր. Մանուկ է նէ դեռ չես գիտեր որ
թագաւորը քեզ իրեն խորհրդա-
կան ընտրեց։

Խոս. Ա՞ն. Երբ։

Հայր․ Այսչափ գիտցար հերիք է․ մնացածը գաղտնիք մըն է․ բայց շատ չի քըշեր կը հրատարակուի։

Գաբ․ (Չեմ գիտեր ի՛նչպէս մարդ է ասիկա․ առատօրէն պաշտօններ կուտայ․․․ միտքս կուգայ որ զիս պէյ ըրաւ, հիմակ ալ եղբայրս խորհրդական կընէ թագաւորին․․․ ի՛նչ բան է չեմ հասկընար։) (Ինքնիրեն)

Հայր․ (Կարգէնէն) Ի՛նչ կը մտածես։

Գաբ․ Խորհրդականին ու իր պէյ էֆէնտի եղբայրը կը մտածեմ։

Հայր․ (Թերթէն առնէն խնդալով) Կիմանաք բարեկամ կիմանաք։

Խաթ․ Թու վերջի խօսքերդ պարոն․․․ ինչ և իցէ ես չի լսելու կը զարնեմ․ բայց ուրիշ խօսքի նայինք․ ո՞ւր է իմ սիրելի Աղարշս։

Գաբ․ Ա՛հա հոս է։

Խաթ․ Դուն ամենևին ձայն չե՛ս հաներ։

Վարդ․ Ես չեմ ուզեր միջահատել իմաստուններուն խօսքը որ ինէ աղէկ կը խօսին։

Խաթ․ Ամբատը ո՞ւր է․ չեկա՞ւ աս իրիկուն։

Ամբ․ (Կը պատնէ յէտաքը։)

Խաթ․ Աս ո՞վ է։ (Զէտաշնը կը շշմէ ատէն ատէն Ամբատէն վրայ։)

Մ՚ր. Դուկին սիրելի Աստուած է որ ըզ-քեզ կը սիրէ ու կը յարգէ։

Խ... Ա՛հ որդեակ անխրատութիւնը քեզ կը հալածէ բայց ած կը պաշտպանէ. սիրտ առ երբոր դու զքեզ այ յանձնես թշուառութեան մէջ, կամ ուշ կամ շուտով փոխարէնը կառնես կը մխիթարվիս։

Գ... Ես պարօնին ալ սանկ կըսէր. ու ինքը խօսք տըվաւ որ թագաւորին առջին հանէ պիտի մեզ։

Խ... Ա՛հ ուր էր թագաւորին առջին ելլէինք. եթէ հիմակ սանկ կոյր չըլլայի. հարիւր անգամ գացեր էի թագաւորին ոտքը ինկալու։

Հ...ր. Շատ մարդասիրութեամբ կընդունէր զքեզ։

Խ... Ի՛նչ աղէկ թագաւոր է. չեմ գիտեր ա՞րդեօք հիմակ ալ անանկ խոնարհ ու գթած է։

Գ... Հրամմէ՛րես. կըսեն թէ միշտ միակերպ է ամենևին չի փոխեր բնութիւնը։ Աղէ՛կ ըսիր ե՛ղբայր. դուզինքը աղէկ պիտի ճանչնաս։

Խ... Խիստ աղէկ կը ճանչնամ. քանի որ կը հանդըպէի իրեն՝ ձեռքը կը պագնէի. ան ատենը զուարճալի բան մըն

էր զինքը տեսնել, իր ոգին․ խոնարհութիւնը, բարերարութիւնը, գթութիւնը։ Բարեկամներ իր հպատակներուն, կը փաղէր կը փընտռուէր, ամէն գէշութեան առաջքը կառնէր։ Ամէն տեղ կը գտնուէր․ աղքատներն ու մեծատունները հանգիստ կը քընանային ու ինքը արթուն կը կենար անոնց բարիքը մտածելու համար։

Գաս․ Ըսէ՛ եղբայր ըսէ՛․ դու խելքս գըլխէս կը տանիս ատանկ գովելով մեր թագաւորը։

Խաս․ Մինչեւ հիմա միտքս է իր վարվելու կերպերը, դէմքը, մինչեւ իր խօսքերն ալ։

Գաս․ Նկարագրէ՛ ինծի իր անձը կաղաչեմ․ որովհետեւ առջին ելլեմ պիտի․ ինչպէս աս պարօնը խօսք տըւաւ մեզի․ որպէս զի բաղձութեան մէջ ճանչնամ զինքը։

Խաս․ Անանկ է նէ մտիկ ըրէ․ հասակը չափաւոր․․․

Հայր․ Աղաչեմ այդ խօսքերը մէկ դի դնէք․․․

Գաս․ Չեմ կարծեր որ նեղուի գայ քեզի երբոր մեր թագաւորին խօսքը կընենք։

Խաս․ Գրեթէ միշտ զինուորի հագուս-

տալ է · ու իր սիրական հագուստը՝ մանաւանդ երբոր ճամբորդութիւն կընէ, կանանչ գոյնով է · Թեւերուն բերանը, շրջապատը ու մէջի կըտաւը կարմիր :

Գաւ. · Աս պարօնն ալ անոր պէս է հագեր :

Խաժ. · Խընտում երես է, մազերը սեւ է, աչվըները քիչ մը կապուտի կը զարնէ, ընքվինները հաստ է, երեսը կըլոր է, ու վարի պռկունքը քիչ մը հաստ է :

Գաւ. · (Նայելով Հարիւրապետին) Մինչեւ հոս այս պարօնը կը նմանի անոր · խնծորին կէսը աս կէսը ան է :

Հայր · (Հիմակ այս բարեմիտ մարդոց անմեղութիւնը զիս պիտի յայտնէ :) (ինքնիրեն)

Խաժ. · Աղէկ մտքդ պահէ այս երկու նըշանը որ հազար մարդու մէջ կըրնաս ճանչնար : Ձախ կողմի աչքին տակը մեծկակ պխսակ մը ունի :

Գաւ. · (Մեղա աչքը Հարիւրապետին վրայ տնկելով, ու շփոթելով կը զարնէ) Պխսակ մը :

Վաղ. · (Ա- Մէջտեղ իրենց ալ դատաւորութենայելով զարմանքի ու շփոթութեան նշաններ կը ցուցնեն :)

Խաչ. Աջ կողմի ականջին տակն ալ գըն-տակի վէրքի նշան մը կայ որ պատե-րազմի մէջ առաւ ։

Գոռ. (Ծուռէն կը նայի Հարիւրապետին ։)

Հայր. (Ճարպիկու-թեամբ կը թաշկինակը երե-սէն կը բանէ ։)

Գոռ. (Զարմանալով Խոսրովին) Ե՞ղբայր ։

Խաչ. Ի՞նչ է ։

Գոռ. Իրա՞ւ կըսես այդպէ՞ս է ։

Խաչ. Ինչո՞ւ կը հարցնես չէ՞ս հաւատար ։

Գոռ. (Կը նայի Հարիւրապետին, ետքը Վա-ղարշին ու Սմբատին · ձեռքը ոտքը կը շարժէ, կ'ուզէ խօսիլ, ինքզինքը կը բռնէ · ու բերանը բաց՝ խելքը գլխէն գացածի պէս կը կայնի ։)

Հայր. (Ձի փետնելու կը շարժէ ու քանի մը քայլ կը նետէ ։)

Գոռ. (Կա՛մ ան է, կա՛մ երազ կը տեսնեմ ։) (ինքնիրեն)

Սմբ. (Վա՛ղարշ պիտակը տեսա՞ր ։)

Վաղ. (Հապա ան պռկունքը, աչվըները · ո՛չ ամմէնն ալ . . . ամմէնն ալ . . .

Հայր. Է՛յ հիմակ ի՞նչ կը նշանակէ այս ձեր յանկարծ լռութիւնը · մարդ չի՞ կա՞յ խորաթող ։

Սմբ. (Վաղարշին) (Հապա այն երեսը պահելը թաշկինակով ։)

Վաղ. (Ինքնաիրեն) (Ո՛հ ոտքէս մինչև գըլուխս կը դողամ։)

Հայր. Ա՛հ կերևի որ ձանձրութիւն տըվի ձեզի. Մնա՛ք բարով սիրելի բարեկամներ։ (Կորանալու յառաջ։)

Գու. Չէ՛ չէ՛ մեզի ձանձրութի՜ւն չես տար մինչև առտու ալ կենաս նէ։

---

## ՏԵՍԱՐԱՆ. Դ.

ԱՐՏԱՒԱԶ, ՈՐ ՀԵՏԸ ԿԸԲԵՐԷ ԱՐՇԱՄԸ ՈՒ ԱՇՈՏԸ ՀԱՐԻՒՐԱՊԵՏԻ ԿԵՐՊԱՐԱՆՔՈՎ, ԵՒ ՎԵՐԻՆՆԵՐԸ

Արտ. (Հարիւրապետին) Ա՛հա պարօն այն երկու փոքրիկ հարիւրապետները որ կաղաչէին քեզ տեսնել ու հետդ խօսիլ։

Արշ. (Ու Աշոտ գլխարկնին կը հանեն ու շնորհօք յուռով կը խոնարհին։)

Հայր. Ինչո՞ւ են եկեր . . . ու ինչ . . .

Արտ. Հարցուր իրենց ու տե՛ս ինչպէս աղէկ պատասխան կուտան։

Հայր. Առա՛ջ եկէք (տղայք՝ որ առաջ կու-գան.) Ո՞վ էք դուք տղաքս։

Որդ. (Ա. Ն. Հօր.) Բոլորին երկու հաւա-տարիմ ծառաներդ ենք:

Հայր. Ի՞նչ կուզէք:

Որդ. Մեր հօրը բարեկամը տեսնելու իր բերնէն սորվիլ մեր հօրը նմանելու:

Հայր. Ո՞վ էր ձեր հայրը:

Որդ. Փառաներսէհ զօրապետը:

Հայր. Դո՛ւք անոր տղա՞քն էք . . . բայց ինչպէս հոս կը գտնուիք . . . (Ն. Հայր-ալէն) Մ՝ինա՞կ են այս տղաքը:

Որդ. Չէ՛ պա՛րօն հոս է իրենց հօրեղ-բայրը:

Հայր. Ըսէ որ ներս հրամմէ:

Որդ. (Եր. Ն. Հօր գլխարկնին գլուխնին կը դնեն, ու թուրերնին կը հանեն ու կեր-թան կը կենան դրանը երկու կողմը:)

Հայր. Դուք ի՞նչ կընէք:

Որդ. Մեր հօրը բարեկամին պաշտպա-նութիւն կընենք:

Հայր. Ի՞նչ սիրելի տղաքներ են . ինչ ու-րախութիւն կը բերեն ինծի:

Գող. (Ես զարմանքով պաշարուած մնա-ցեր եմ ու խօսք մըն ալ չեմ կըրնար գուրցեր:) (Ինքնիրեն)

Խոս. Ե՛ղբայր . (Յետաքայլը գընալելով.)

Գող. Թո՛ղ տուր զիս:

Խոս. Ի՞նչ ըսել է . . .

## ՏԵՍԱՐԱՆ Ե.

ԱՐՏԱՒԱԶԴ, ՈՐ ՆԵՐՍ ԿԸ ՄՏՑԸՆԷ ՀՐԱՀԱՏԸ ՈՒ ՊԱՀԷՆ, ԵՒ ՊԵՐԻՆՆԵՐԸ.

Արտ. Ահա բերի պարոն։ (Կուգայ ու էաձը չերթայ։)

Հար. Հրամանքդ հո՛ս ես պարոն։ (Հրահատին)

Հրա. Խողութիւն ըրէ. ներէ՛ համարձակութեանս։

Հար. Գուցէ կըկասկածէիր որ ես իմ խոստմունքս մոռցա՛ծ ըլլամ։

Հրա. Հրամանոցդ պէս պարոնները խոստմունքնին չեն մոռնար. բայց ես ուզեցի իմ յարգանաց նշանս ցուցունեմ։

Հար. Պէտքը չէր այդ աշխատութիւնը ընել, որովհետեւ հրամանքդ Քաղաքապետ մըն ես։

Հրա. Ի՞նչ. ե՞ս. ե՞րբ եղայ քաղաքապետ։

Գու. (Պաշտօնաւորին մէկն ալ էվէլցաւ. ես Պէյ էֆէնտի. անիկա քաղաքապետ. եղբայրս ալ Խորհրդական. հա՛ հա՛ հա՛. նայինք վերջը ո՞ւր պիտի երթայ։) (Ենքներեն)

Հայր. Ալ ըսաւ հրամանոցդ որ ես հոս եմ։ (Հրահարէն)

Հրա. Հրամանքդ քիչ մը առաջ ղուրցե-ցիր...

Հայր. Հրամե՛րես միտքս եկաւ։ Այս տը-ղայքը քու եղբօրդ Փառներսէհ զօ-րապետին տղա՞քն են։

Հրա. Ծնած ու ընծայված են հրամանո-ցըդ ծառայելու՝ եթէ ընդունիս։

Հայր. Ինծի՞ ծառայելու։

Հրա. Ի՛նչ թողութի՞ն ըրէ եթէ այս խօսքս ելաւ բերնէս. ներէ իմ շփոթութե՞նս։

Դու. (Ա՛լ տարակոյս չիկայ. անիկայ է։) (Ինքնիրեն)

Սէֆ. (Կամացուկ մը Շաւարշէն) բան մը հաս-կըցա՞ր Շաւարշ։

Վաղ. (Կամացուկ մը ու վախնալով) Ա՛հ Սըմ-բատ գտնաս ինչպէս սիրտս կը նետէ։

Հայր. (Երկուքը եղբօրերուն) Դուք ինչ կընէք. ինչո՞ւ այդպէս տրտում ու անխօսուկ կեցեր էք։

Վաղ. (Խոնարհութեամբ ու կամացուկ) Բան մը ըրած չունինք տէ՛ր իմ։

Հայր. Դուք կը դողա՞ք։

Վաղ. Չէ՛ տէր իմ... (Ոտքէս մինչև գլուխս կը դողամ։)

Հայր. Խօսեցէ՛ք։

Հրա. Եթէ չի վախնայի սրդողելէդ . . .
(Խոնարհութեամբ մօտենալով Հարիւ-
րապետին.)

Հայր. Ըսէ՛ մի՛ վախնար։

Հրա. (Համարձակելով) Ա՜հ. չէ՛ չէ՛. Հրա-
մանքդ բարերար և գթած ես. ու
թող կուտաս որ ձեռքդ պագնենք։

Գաւ. Ե՛ս ալ պարոն. . . ե՛ս ալ. . (Լալով ու-
ցուցունելով Ամբարը որդին ալ կուլայ։)
Իմ փեսիս ալ ողորմէ։

Խաչ. (Միտքս մեծ կասկածի մէջ ինկաւ։)

Հայր. Ա՛ս ինչ արցունքներ են. ինչո՞ւ
կուլաք։

Գաւ. Ա՜հ տէ՛ր. արժանացուր զմեզ ոտքդ
իյնալու։ Այս արցունքները նշան
թող ըլլան քեզ սիրելնուս։ Մեր
սիրտը քեզ ճանչցաւ։

Հրա. Շնորհք ըրէ որ ուրախութեամբ
հրամանոյդ փառաւոր անունը տանք,
ու չի վախնանք։

Հայր. Ա՜հ. . այո՛ ուզեցի զիս չի ճանչցը-
նել մինչև որ ուզած բաներս խմա-
ցայ։ Բայց երբոր տեսայ ձեր ա-
ռաքինութիւնը և ուրիշներուն մի-
լութիւնները, ա՛լ պէտքը չէ պահել։
Հերիք դիմացայ. ու դուք ալ ար-

ժամն էք իմ սիրոյս ։

Հրա . Ո՛վ տէր տառապած ։
Մէ . Ո՞ւր թագաւորն է ։
Վաղ . Ո՞ւր հայրն է ։
Գա . Ո՜վ յաղթ և գթած թագաւոր ։
([illegible] .)

Խաս . ([illegible] թագաւորէն [illegible]) Ո՜նիկա՞ է ․ ․ Ո՛վ տէ՛ր իմ ․ ․ ․ Ձեռքերս բռնեցէ՛ք տղա՛քս ․ ․ ․ ես ալ ․ ․ ․ ես ալ ․ ․ ես ալ ոտ-վըները պագնեմ ու ետքը մեռնիմ նէ մեռնիմ ։ ([illegible] ։)

Թագ . Հերի՛ք է սիրելի բարեկամներ ․ դուք իմ աչքերս արցունք կը բերէք ։ Նայէ՛ք ․ ահա ես եմ ձեր հայրը ձեր պաշտպանը ու ձեր բարեկամը ։

Խաս . Մի՛ երկար օրեր այս ասանկ թագաւորի մը որ մեզի հայրութի կընէ ։

Գա . Մի՛ մեր կեանքը առնէ անոր տայ ։

Թագ . Այս ձեր ըրած ընդունելութիւնը ու սէրը խիստ շատ անկեղծ են ու սիրտըս աւելի կը շարժեն քան բոլոր ժողովրդեանս Կեցցէ կանչելէն ։ Հոս ամէն բան անկեղծութի ու ճշմարտութի է ։ Այս ինչ երջա-

նիկ վայրկեան է որ ձեզի հետ անցուցի։ Մեննին միտքէս պիտի չելլէ։

Ար․ (Արտորնօք նայելով ու նըրէ Թագուհւորէն) Պա՛րոն քեզի պէս հագված երկու հոգի քեզ կը փընտըռեն ու հոս դուրսը կեցեր են կըսպասեն . . . Ասկէց 'ի զատ . . Ա՛հ տեսնէիր . . մեր տանը առջև հաւաքված ժողովուրդը։ Ազնուականները ու ռամիկները մէկըզմէկ խառնըվեր են ու մի և նոյն փափագը կը ցուցունեն։

Թագ․ Ի՞նչ փափագ ունին։

Ար․ Թագաւորը տեսնել։ . . . Կըսեն թէ հոս է Թագաւորը . նայէ ինչ խենթեր են։

Պաղ․ Ա՛հ Արտաւազ։

Ար․ Ազնուականները, Կենցաղակից ընկերութե՟ մեծաւորը որ Սմբատին հայրն է, պարոն Սուշեղն ու Փառնակը, միւսը միտքս չի գար . և ուրիշ քանի մը հոգի ալ բակը մտան ու հրաման կը խնդրեն ներս մըտնելու։

Թագ․ Ընկերութե՟ մեծաւորը ու պարոն Սուշեղն ու Փառնակը ըսիր, հըրամեն թող ներս գան։

Գու․ (Արտաւազին) Լսեցի՞ր։

Արտ. Խիստ աղէկ: (կ'երթայ)

Թաթ. Այդ հաւատամք բարեկամներ. անոնք զիս անարժան սեպեցին իրենց ընկերութեանը ժողովոյն. այս իմ պարզ հագուստս չի կրցաւ իրենց միտքը պաւկեցընել:

Խաչ. Ո՛հ. անոնք ինչ աւելի կոյր են եղեր....: Հրամանքդ որ մէկ նայելովդ՝ զանոնք կրնաս կորուսաներ....

Թաթ. Ես անանկ հպարտներուն վրայ կը խնդամ ու կը մեղքընամ:

Հրա. Ոտքի ձայն կը լսեմ:

Գաս. (Նայելով) Անոնք են:

---

## ՏԵՍԱՐԱՆ ՎԵՐՋԻՆ.

ԲԱԲԿԷՆ, ՄՈՒՇԵՂ, ՓԱՌՆԱԿ, ԹԱԹՈՒԼ ԽՈՐԷՆ, ՀԱՄԱԶԱՍՊ, ԵՒ ՎԵՐԻՆՆԵՐԸ

Մու. Ո՜ւրախ եմ:

Բաբ. Բարեւ ձեզ:

Փառ. Բարի երեկոյ:

Համ. Ես տանը աներըոլէ:

Գաս. Ե՛ս եմ:

Թաթ. (Խորէնին) Ա՛յ. ան հարիւրապետը

հոս է ։

Խոր ․ (Թախթաւելէն) Ուր ըսես կը մանէ ․ ես հոս ըլլալը գիտնայի՝ չէի իգար ։

Համ ․ (Խորշէնէն ու Թախթաւելէն) (Ո՛հ հոս է Հրահատը ․ կերևի որ իր նոր բարեկամին վրայ շատ սէր ունի ․)

Գուս ․ Ի՞նչ կուզէք պարոններ ։

Բաբ ․ Թագաւորը ։

Թագ ․ Խելքերնիդ կըկարե՞ որ Թագաւորը ձեզի պէս աղնուականներուն տունը ձգէ ու հոս գայ ։

Բաբ ․ Ես ալ անանկ ըսի ․ մենք քանի որ կանք՝ Թագաւորը հոս ինչ բան ունի ։

Թագ ․ Ի՞նչ պիտի ընէիք Թագաւորը ։

Բաբ ․ Ուր է նէ մեզի կկանչայ երթալ յարգել զինքը ․ որովհետև քաղքին մեծերը մենք ենք ։

Թագ ․ Կարծեմ որ քաղքին ամենա պզտիկն ալ չէք ։

Բաբ ․ Ի՜նչ ․ Ճանչցիր խօսքդ ։

Մհր ․ (Խաչատուր էջին պահպանած՝ անանկ որ Բաբէկէնը չէնք չէ տեսներ ․) (Ո՛հ գտնէ կարենայի հօրս իմացընել որ զգուշ կենայ ․)

Բաբ ․ (Վարդգէնէն) Պատասխան տուր ինծի ․ Թագաւորին հոս մտնելը ինչ

է թէ սուտ.

Գ.ու. Ես աս պարօնէն ՚ի զատ ուրիշ մարդ չի տեսայ հօս. (Խափարը ցուց-նելով.)

Թ.ագ. Ա՛նշան և առանց պաշտօնի մարդ ըլ-լալուս համար՝ արժան չեմ ձեր ժո-ղովքին. գուցէ ձեր աչքին առջին ալ երեւնալս մեծ յանցանք է ինծի.

Թ.աբ. Ո՛վ խելք այս անանց որ մեզի ըսին թէ թագաւորը հօս է. պարապ տե-ղը մեզ վազցընել տըվին սուրհան-դակաց իջեւանը, քաղաքապետին դատարանը, ու ետքն ալ հօս.

Խոր. Կ՚երդնում որ թագաւորը ե-րազը անգամ չի տեսներ մեր քա-ղաքը գալու. մարդ չըլլայ ինչ ըլ-լալը.

Թ.աբ. Խենթ ենք որ ասոր անոր խօսքին մտիկ կընենք.

Թ.ագ. Ճ՛շմարիտը խօսեցար անանկ է.

Խոր. Ե՛րթանք երթանք. (Արբալու ցեւով.)

Բ.աբ. (Աքբար փեսնելով) Ա՛ս ինչ է. գա-հու ինչ բան ունի.

Միք. Ո՛հ հայր իմ գթա իմ վրայ. (Ապար չէշնայ.)

Բ.աբ. Ա՛նիրաւ. ես քեզի չի պատուիրե-ցի՞ որ մէկ մ՚ալ աս տունը ոտք չի

կոխես , մունաս ասոնք ։ Կեցիր դու . այսօր քեզ ալ աս մարդն ալ (Պոստեկէնը ցուցունելով) դատաւորին ձեռքովը բանտը դնել տամ ։

Թագ. Դատաւորը եղած բանը ա՛ղէկ մը իմանայ նէ , մտիկ չըներ քեզի ։

Բաք. Դու մի՛ խառնըվիր ազնուականաց գործքին մէջ . քեզի խօսք չիյնար ։ Դու տակաւին ասոնք (ցուցունելով Պոստեկէնն ու Խոստրովը) չես գիտեր ինչ գէշ մարդիկ են ։

Թագ. Գէ՞շ մարդիկ են . այդ ինչ անուն է որ առաքինի մարդոց կուտաք . մէկը քաջ վարժապետ . միւսը իմաստուն փիլիսոփայ որ պարծանք են մեր ազգին , գէշ մարդիկ չեն կըրնար ըլլար , ինչպէս որ դու կըսես ։

Բաք. Ես քեզի մտիկ չեմ ըներ . դու չես խառնըվիր . ես կատեմ ասոնց ամմէնն ալ ու մինչեւ ՚ի մահ հալածեմ պիտի զիրենք . թէ և քեզի պէս պաշտպաններ ունենան ։

Թագ. Դո՛ւ ինչ պիտի ըլլաս ա՛նօրէն ամբարտաւան . դու ճանչցի՞ր զքեզ . միտքդ բեր առջի վիճակդ որ գրեթէ ուտելու հաց չունէիր . հիմակ քանի մը սատակ ունենալովդ ամմէնն ալ

մոռցա՞ր։ Ատի՛կ ըրէ ինծի․ Թագա-ւորին կողմէն կըխօսիմ քեզի․ վասն-զի ինքը իմացեր է ձեր մէջի եղած թշնամութիւնը։ Եթէ ասոնց ամբը-ծութիւնը առաքինութիւնը հերիք չէն ձեզի պէս մոլի և ամբարտաւան մար-դոց սիրտը կակղցընելու․ եթէ հարկ է քեզի պէս ջաղացպանութէ եկած ազնուականի մը հաւատարիլ՝ գիտցի՛ր որ քու տղադ Ամբատը՝ Գուրգէն պէյին փեսան է, որուն եղբայրն ալ Խոսրովը՝ Թագաւո-րին խորհրդականն է։ Աս քեզի հե-րիք ըլլայ քու հպարտութիւնդ վար դնելու։

**Բաք․** Հա՛ հա՛ հա՛․ ե՞րբ առին ասոնք աս պաշտօնները։

**Թ․ագ․** Երբոր դու քու կինդ անարժանու-թեամբ կորսընցուցիր։

**Բաք․** Պարօն հարիւրապետ գիտցի՛ր զուր-ցածդ․ հիմակ քեզ քըշել կուտամ աս քաղքէն։

**Թ․ագ․** Աըտորէ՛ ձայնդ․ ու զիս մի՛ բռնա-դատեր աւելի զուրցելու․․․ (Դառ-նալով Գուրգէնին, Խոսրովին, ու Ամատունին) Բարեկամներ ուրախ կեցէք դուք․ ձեր առաքինութիւնը

ձեզ վարձատրեց։ Այս հիմակ կեր-
թամ․ բայց գիտցած ըլլաք որ ձեր
բարեկամն եմ․ ձեզ չեմ մոռնար։
Մնաք բարով։ (Պատրաս ելնելու կեր-
թայ․ Պարգէն, Սմբատ, Վաղարշ,
Հրահատ, ու Վահէն հետը կերթա-
նան։)

Բաբ․ Ընշվելու ձայնը լսածին պէս ինչ-
պէս կըծկեց։

Հրա․ Ա՛հ տէր իմ․ ․ ․

Գաւ․ Մ՛եր երախտագիտութիւնը․ ․ ․

Թագ․ Լաւ կեցէք։

Արշ․ (Այս Սըղա Վարամ կըբարձէն Թա-
գաւորը։)

Թագ․ Հայաս ու պարօնիկները մոռցըլին
ապրիր։ (Սըրտաւն) Մնաս բարով
զօրապետ։ (Սըղաւէն) Մնա՛ս բարով
հազարապետ։ (Չանչարծ դառնալով
դրանը քով եղողներուն) Պարոնք ու պա՛-
րօններ, իմ խրատս մտիկ ըրէք․ ձեր
առջի վիճակը աչքերնուդ առջին բե-
րէք, ու ձեր հպարտութիւնը մէկ դի
դրէք․ յարգեցէք ամէնը․ հիացէք
որ հայրենեաց ու ազգին համար աշ-
խատողը կամ՛ատակ խարձողը արժա-
նի է անձն յարգութեան ու մեծ
մարդ է , և առաջին ու ջղմորիս

ազնուականութիւնը՝ է աուքինի ըլ-լալ։ (Կերթայ)

Թաթ. Ես կը զարմանամ աս մարդուն հա-մարձակութեը վրայ։ Հիմակ կեր-թամ բանալը գնել կուտամ անիկա։

Գրա. Ո՜ ատա մի՛ արտորար։ (Ծաղր ընե-լով.)

Թոր. Թող տուինք որ մեզի այնչափ բան ըսաւ ու մենք ալ բերնին չափը չի տուինք։

Վահ. Բաղդերնիդ բանեցաւ։

Հրա. Փառք տուէք աստուծոյ։

Թաթ. Ինչո՞ւ. գիտցար որ մեզի պէս ազնուականները հարիւրապետի մը թուրէն կը վախնա՛ն։ Ո՞վ է ան հարիւրապետը։

Փառ. Անիկա միայն ձեզի պէսներուն աչ-քին մեծ կերեւայ։

Մար. Ազնուականներուն քով սատակ մը չեն արժեր ան ալ դուք ալ։

Սէֆ. Ո՛հ հայր իմ։

Բաբ. Ի՞նչ է։ (Նարչանալով.)

Սէֆ. Թագաւորը ինքն էր։

Բաբ. Ի՞նչ կըսես.. Ո՛հ։

Թաթ. Ա՜յ։

Խոր. Թագաւորը ինքն էր։

Համ. Այ մենք.. .ո՜հ վայ եկաւ մեր

գլխուն ։

Թագ. Ա՛հ. բան մը կըլլամ. . (Կիյնայ աթոռի մը վրայ ։)

Հրա. Արժան է քեզի ։

Թագ. Կաղաչեմ կտոր մը ջուր ։

Հրա. Քու բանդ լոկ ջուրով պիտի չի լըմընայ ։

Խոր. Առաւել մեռած եմ քան թէ կենդանի ։

Փառ. Ամենայն մեր ազնուականութիւնը ծաղր պիտի ըլլայ այս անարգ մարդոց առջեւ ։

Գոռ. Խե՛ղճ ազնուականներ. տեսէք ինչ վիճակի մէջ ինկան իրենց գոռոզութեամբը ։ (Ծաղր ընելով ։)

Բաբ. Ո՛հ ապերախտ ծառայ. դու մատնեցիր զիս ։ (Սմբատին)

Սմբ. Չէ՛ հայր իմ ես չէի կրնար քեզի իմացըներ ։

Թագ. Ա՛հ. աս ինչ կայծակ էր որ զիս զարկաւ. ես խախտ եղայ. խայտառակ եղայ. կերթամ ինքըզինքս ծովը կը նետեմ ։

Վահ. Կեցէ՛ք. մօտի՛կ ըրէք պարոններ իմ խրատներս, որ շատ օգտակար է ու բարեկամաբար կըսեմ ձեզի ։ Սուտ պատճառով հպարտացողը, ճշմարիտ

պատճառով կը խոնարհի։ Այս դիպուածէն մի՛ վշտանայք. եթէ մէկ դիէն նայինք նէ՝ խիստ ծաղրական բան մըն է ու յանցանքնիդ բանի տեղ չի դրուիր. վա՛ զի ձեր հպարտութիւնը տգիտութենէ առաջ կուգայ։ Աղերսագիրով մը թողութիւն խնդրեցէք թագաւորէն. անիկա կը խնդայ ձեր վրայ՝ ինչպէս որ ամենէն լսողներն ալ պիտի խնդան ձեր տըգիտութեանը վրայ, ու ամենէն բան կը ըմըննայ կը ներէ ձեզի։ Բայց եթէ դուք խելք ունիք՝ ասկից օգուտ քաղեցէք. ասիկա կը սորվեցընէ ձեզի զգոյշ կենալ համեստ ու խոնարհ, և ո՛չ թէ ամբարտաւան. քաղաքավար եղիք ձեզի հաւասարին հետ. խոնարհ՝ ամենուն հետ. և մարդասէր՝ ձենէ վարերուն. լսեցիք թագաւորին բանը. ասոնք են միայն ազնուականութեան նշանները։

ՎԵՐՋ.

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԵԱՆ։

# ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ԲԱՌԵՐՈՒ։

Ախորժակ · արզու , մէյլ , սէվտա ։
ախորժիլ · հազ ընել ։
աղերսագիր · արզուհալ ։
աղիք · պաղըրսագ ։
ամենաբուժ դեղ · պաշ իլաճ ։
այսու ամենայնիւ · լաքին , ամմա , պու ճիւմլէ իլէ ։
անիւ · Թէքէրլէկ ։
անկեղծ · տօղրու , սատըգ , հագիգէթլի ։
անկիրթ · Թէրպիյէսիզ ։
անհիմն · Թէմէլսիզ , ասըլ եօք ։
անհնար · գապիլսիզ ։
աննշան · նիշանսըզ , անծանօթ ։
անշուշտ · շիւպհէսիզ , սահիհ ։
անպատեհ · եագըշըգսըզ , սըրասըզ ։
անվայելուչ · եագըշըգսըզ ։
անտարակոյս · շիւպհէսիզ ։
անօգուտ · ֆայտասըզ ։
ապահով ըլլալ · էմին օլմագ ։
ապացոյց · իսպաթ ։
ապշիլ · շուարիլ · շաշըմագ ։
ապտակ · շամար ։
ապօրինաւոր · եօլսուզ , ճայիզսիզ , նամագուլ ։
աջ · սաղ դի ։
առարկայ · նիւթ · մատտէ ։
առիթ · ֆըրսաթ ։

առիւծ • առլան ։

արդիւնք • պտուղ , գործ , վաստակ ։

արհամարհել • անարգել , ոտքի տակ առնել ։

արուեստ • զէնահաթ ։

առատաձեռնութիւն • ճէօմէրտլիք ։

աւանդապահ • էմանէթ պահող՝ օրէնքի , ուխտի եւն ։

Բաղդատութիւն • նմանութի՟ւն • ռուպար , թէշպիհ ։

բանտ • հափըս ։

բարք • թապիէթ , խույ ։

բոլորովին • պիւթիւն պիւթիւնէ ։

բռնադատել • զօռ ընել ։

Գաղղիա • Ֆրանսա ։

գաղտնիք • սըռ , էսրար ։

գանձ • } հազնէ ։
գանձատուն • }

գլխարկ • գլխանոց • շափխա ։ եւն ։

գնտակ • թիւֆէնկի խուռշին ։

գոհ ըլլալ • հօշնութ օլմաք ։

գոռոզանալ • մեծութիւն ծախել • խօրօզլանմաք ։

գովեստ • մեթ ։

գործածել • գուլլանմաք ։

գունդ • ասկէրի պէօլիւկ ։

գուշակել • փէրասէթ ըլէ պիլմէք , տույմաք ։

գուցէ • պէլքի ։

գրաւ դնել • պէս բռնել ։

գրեթէ • սէպէքի ։

գրպան • ճէպ ։

Դահեկան • ղուռուշ ։

դաշտ · օվա ։
դերասան · քօմէտիաճի , թադլիտճի ։
դիպուած · տիւշիւշ , րասթ ։
դիպուածով · ռասթ կելէ , թէվէքէլլի ։
դիտել · կէօզէթմէք , պագմագ ։
դիւրացընել · գօլայլամագ ։
դիւրաւ · գօլայճա ։
դիւրին · գօլայ ։
Երախտիք · էյլիկ ։
երեւակայութիւն · խէյալ , ֆիքր ։
եկամուտ · իրատ ։
Զգուշ կենալ · մուգայէթ օլմագ , սագընմագ ։
զինուոր · ասքէր ։
զղջալ · փիւշման օլմագ ։
զուարճութիւն · զէվք , շաղըրք ։
զօրապետ · սէրասքէր , ճէնէռալ ։
Թաշկինակ · մահրամա ։
Թերեւս · պէլքի ։
Թէութիւն · դավլ ։
Թուղթի պահարան · ճզտան , թէֆտէր քէսէսի ։
Թոյն · զէհիր ։
Ժամ · սահաթ ։
ժառանգութիւն · միրաս ։
ժայռ · գայա ։
Իմաստակ · միայն անունով գիտուն , արիֆտէն կէ-չինէն ։
Լուռ կենալ · սուս օլմագ ։
Խանգարել · աւրել ։

խնամք • հոգ ։

խորտակիլ • կոտրտիլ • փառալանմագ ։

խուց • օտա ։

Ծաղր ընել • զեֆլէնմէք ։

Կամակորութիւն • ինատ ։

կանթեղ • գանտիլ ։

կառք • առապա , գօչու , հընթօֆ ։

կասկած • շիւպհէ ։

կասկածիլ • շիւպհէլէնմէք ։

կատակերգութիւն • քօմէտիա • թագլիտ օյունու ։

կարելի է • լաալիլ է ։

կերպ • թարզ , շէքիլ ։

կենցաղակից ընկերութիւն • բարեկամներու մէճլիս ։

կնքել • մէօհիւրլէմէք ։

կուրըզկուրայն • } քէօրքէօրունա ։

կուրօրէն • }

կոշտ • նասըր ։

կրթութիւն • թէրպիյէ ։

Հագիւ • ճորով • անճագ , կիւճպէլա ։

հասակ • պօյ ։

համարձակիլ • ճէսարէթ էթմէք ։

հարկաւ • հէլպէթտէ , մութլագ ։

հիմն • թէմէլ ։

հպատակ • միւթիւ • րայա ։

հրապուրել • խելքը առնել , գլխէ հանել • ֆիթ-լէմէք ։

հրատարակել • չաւ ընել , իմացընել ։

հրաւիրել • տաւէթ էթմէք , մեծարել ։

Ձախ · սօլ։

Ճանճրանալ · պէզմէք , օսանմաք։

Ճանճրութիւն · օսանճ , պէզարլըք։

Ճարպիկութիւն · չէվիքլիք։

Ճեմել · օլթա վուրմաք , կէզինմէք։

Մեծատուն · հարուստ · զէնկին։

Մերկ · չըպլաք։

Միակերպ · պիր գարար։

Միջահատել · սէօզ արասընա կիրմէք · փէրահաթ էթ-
տիրմէք , քէսմէք։

Միջոց · չարէ։

Մղոն · միլ։

Մշտախոհ · տայմա մամըտայող։

Մսավաճառ · խասսապ։

Յանդգնութիւն · չի մտածելով ինքնիրեն կիւվէն-
միշ ըլլալ · պի թէտպիրլիք։

Յանցանք · գապահաթ։

Յոյս · ումուտ։

Նախապատիւ համարիլ։ աւելի պատուով և խըյ-
մէթլի համարիլ։

Նախատեսութիւն · յառաջատեսութիւն · ետքի ըլ-
լալիքները գիտնալ։

Նամակ · մէքթուպ։

Ներկայացնել · էօնիւնէ կէօթիւրմէք · հուզուրա
չըքարմաք։

Նկատում · թէքլիֆ , տըգգաթ։

Նկարագրել · շէքլինի վասֆ էթմէք · թասվիրը եազ-
մաք։

Շողոքորթել · եալթագլանմագ, միւրայի սէօյլէմէք։
շողոքորթութիւն · եալթագլանմագլըք, միւրայըճըլըք։
շրջապատ · էթրաֆ։
Որովհետեւ · չիւնքի։
ունայնամիտ · անխելք։
Պաշտպան · կըռնակ կեցող, տէր կեցող։
պաշտպանել · կըռնակ կենալ, տէր կենալ։
պաշտօն · հըզմէթ, մանսուպ։
պաշտօնատար · մանսուպլու, հըզմէթտէ օլան։
պաշտօնաւոր · մանսուպլու, փայէլի։
պատերազմիլ · ճէնկ էթմէք։
պատուանուն · մէրթէպէ, փայէ։
պատուէր · թէմպիհ։
պատուհան · փէնճիրէ։
պատրաստիլ · հազըր օլմագ։
պատրաստութիւն · հազըրլըք։
պարզ · սատէ, պայաղը։
պարգեւ · պաղշիշ, փէշքէշ։
պարտեզ · պահճէ։
պիսակ · պէնէկ։
Ջաղացպան · տէյիրմէնճի։
Ջաղացք · տէյիրմէն։
Ռամիկ · պայաղը մարդ · հալգ։
Սեղանատախտակ · մասա։
սկաւառակ · թապախ։
սուրհանդակ · թաթար։
սուրհանդակաց իջեւան · մէնզիլ հանէ։
սպասել · պէքլէմէք։

ստուեր · քէօլկէ ։
սրահ · սալա , մեծ սուֆա ։
սրճավաճառ · գահվէճի ։
սրճարան · գահվէհանէ ։
Վայրկեան · Թաքիքէ ։
վարձք · փոխարէն ։
վէրք · եարա ։
վիճակ · հալ ։
վիշտ · ցաւ , տէրտ ։
վիրաւորիլ · եարալանմաք ։
վրէժ · էօճ ։
Տուփ · խուԹի ։
տհաս · չհասած , խամ ։
տպագրիչ · պասմաճը , ստամբաճը ։
Րոպէ · Թագիգէ ։
Ցաւակից ըլլալ · մեղքընալ ։
Փոքրոգութիւն · կարճամտութիւն , տկարամտութիւն ։
փողոց · սօխախ ։
փոշի · Թօզ ։
Քայլ · ատըմ ։
քԹախոտ · էնֆիէ ։
քսակ · քէսէ ։
Օգնել · իմտատ կամ եարտըմ էԹմէք ։
օգնութիւն · իմտատ , եարտըմ ։
օգտակար · ֆայտալը ։
օտարական · դըրսեցի , եապանճը ։

Գիրքը ենթարկվել է
17/III -52 թ.